№ 2

Приношение изъ Смирны
Отъ Старшаго Смирнскаго Архіепископа
Анѳимъ въ библіотеку
Лазаревскаго Института.
въ 1843 году.

2004

ԽՈՐՀՐԴԻԱՆՈՒԹԻՒՆ

Վ 3763 ա

~~1008~~ 3408
1412-ԱԴ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒ-
ԹԻՒՆ,

ՀԱՅՐԱՊԵՏ ԵՒ ՆՇԱՆԱՑ
ԵՒ ԽՈՐՀՐԴՈՅ ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ

Ի ՊԼՏՍ ՈՒՂՂԱՓԱՌ ՄԱՆԿԱՆՑ
ՆՈՐԻՆ

ՅՕՐԻՆԱՆԻ,

Տ. ՄԱՏԹԷՈՍԻ ՍՐԲԱԶԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ՀԱՄԻՈՒՆԵՒՈՅ

Ի ՎԱՐԹԱՐԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊԱՅ

1842 ԻՄՊԱՏ

281

ՀԱՅԿ-ՍՍՌ

4906
38

ԲԱՐԵՆԱԽՕՏՅԱՆ ԷՕՎԱՆԻՐ

ՄԵԾԱՊԱՏԻՒ

ՍԱՂԱՑ ՍՏԵՓԱՆ

ԽԱՅՖԱՑՈՎ

Երկնաձիր պարգևաց աստուածային բիւրաբեղուն շնորհաց ցանկացեալ 'ի տենչ արտաուչ, ցուցէք Ջերմեռանդն զձեր սիրտ բարեզգեաց որպէս զանօթ ընտիր պատրաստիկ ընդունարան այնր յորդաբուղխ զեղման. առ որ խանդակաթ փափագ ձեր՝ յօժարեցոյց զձեզ 'ի լոյս ընծայել զայս փոքրիկ տեսարան ամենայանկալի շնորհաց և աքանչելի խորհրդոց քրիստոսական սուրբ Եկեղեցւոյ. որ իբրև զանձարան աստուածային շնորհաց՝ և հրաշազարդ խորհրդա-

բան կենարարին մերոյ Յիսուսի փրկարար արգեանց՝ նուիրի արժանաւորիգ երկնային բարեաց։

Ընդ այս բարեպաշտիկ հաճութիւն ձեր նկատեալ այլովքն հանդերձ, արժան համարիմ զձեր հոգեսիրութիւն անուանել Շահամամաս հոգևոր, ո՞ Ընդուամեծար Սիրեցեալդ 'ի Տէր, զի հաճեցաւ ազգասիրութիւն ձեր՝ ոչ միայն առանձին զուարճանալ յարդասիս երկնապարգև շնորհացն և արբարար խորհրդոցն, որ 'ի սմա սա-

կատամանեայ յուցանի . այլ մտադիր տա-
րածել զսա ընդ համայն համազգի ողջա-
փառ անձինս , 'ի սէր սերտ քրիստոսական
փրկարար արդեանց ։

Օ՛ի եթէ որոց միանգամ վայելեալ ընդ
այս , և զսորին հոգեկան շահաստացութիւնս
զանձեալ 'ի սիրտ՝ փարթամասցին յերկ-
նային փառաւորութիւնս , անշուշտ և ձեր
իսկ բարդին վարձք երանութեան , և զան-
ձին յերկինս անկապուտն ձեր Հոխութիւնք
հոգեփարթաւք ։ Ապա յաւէտ ընդ այս

յաւերժասցի բարեշահիկ արդիւնք Աստուա-
ծասիրիդ, անմահասցի բարեպսակ անուն
Աղգասիրիդ. և մշանջենաւորեսցի 'ի ձեզ
բարութիւն աստուածային։

Որպէս յամենայնի բարեմաղթու վասն
բարեցաւպարտ և փառաւոր կենդանու-
թեան ձերում։

Մատթէոս Եպիսկոպոս
Պոլսեցի, Աստիրդ
Զմիւռնիոյ։

1 Ապրիլ 1842.
ՅԱրքեպիսկոպոսարանն
Զմիւռնիոյ։

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Խորհրդակիր խումբ ուղղափառ հաւատացելոց յԵրկրի՝ քրիստոսականն սուրբ եկեղեցի, գերօրհնեալ և բարձրագոյն խորհրդով զարմանալի Աշխարհացոյց հոգևոր նշանաք և աստուածապարգև ձրիատուր շնորհաք, առաւել քան զերկնայնոցն ընկալեալ զոլով զծայրագոյն բարւոյն Հոխութիւնս փառաց և բարեաց. Ի վեր քան զլուսեղինացն գաստակարգութիւնս համարձակագոյն վերամբարձեալ երկնասլաց թևաք կատարեալ աստուածդիտութեան և աստուածպաշտութեան՝ ոչ միայն մերձաւոր և ընտանի հանդիսանայ աստուածային յաւիտենական և ամենացանկալի փառաւորութեանն, այլ և նորին իսկ ամենամեծ վայելչութեանն, և յաւերժական երանութեանն է ժառանգաւոր։

Ի սմա յորդեալագոյց վրակք աստուա-

ծային մշտահոս շնորհաց , զնան աղբեր-
բայեալ առաւել քան զքառասնեայ զեան
Նշխեմեան , յորոգումն հոգւոց զանմահ
կենդանութեան ուղխս զուարթարարս և 'ի
պտղաբերութիւն ասառուածահաճոյ գործոց
առաքինական բարեմասնութեանց ։

Ի սմա անմահ և ամենասէր թագաւորն
վերին հաճեցաւ հաստատել զանչափ բարձ-
րութեան սիրոյ իւրոյ և զամենատուն բա-
րեգթութեանն զաթոռ . և զորս եդիս աս-
տանօր իրրև 'ի մի սիրտ և 'ի մի հոգի
միացեալ հաւատով , յուսով և սիրով ,
կնքեաց ասառուածային շնորհիւ իւրով 'ի
հաղորդութիւն մեծվայելչութեան անբաւ
բարութեան յաւիտենական փառաց իւրոց ,
սրբացուցիչ նշանաւ իւրով ։

Սմա ամենեին անմերձենալի են աղջա-
մուղջ մէզք պատրանաց աշխարհի . և ան-
դարձ է խոյս ոգւոց խաւարասիրաց . զի
մշտափայլ վառք 'ի սմա լոյս ճշմարտու-
թեան եօթնանշոյլ խորհրդոցն մատակա-
բարութեամբ , առաւել պայծառացոյն քան
զեօթնաջահեան ճրագարանն ոսկեձոյլ աշ-
տանակին հնոյ խորանին վկայութեան ։

Ընդ այսքան ներքին և հոգևոր և բաղմաշահ մեծամեծ փառաւորութիւնս եկեղեցւոյն Քրիստոսի զմայլեալ իմ հոգւով և մտաք այնչափ, մինչև զնկնախոհ մտաց իմոց մառացեալ զանբաւականութիւն, սրտեռանդն բաղձանաք ձեռն 'ի գործ արկի յայս գրաւոր խորհրդածութիւն՝ վստահացեալ և յուսացեալ յամենաբաւական շնորհս աստուածային առատաձեռնութեանն, որ միայն է լցուցիչ հոգւոց բաղձանաց, ուղղիչ խորհրդոց մտաց, և զարթուցիչ հոգևոր իմաստից և խորհրդոց բարեաց. 'ի փառս մեծի անուան իւրոյ և 'ի փրկութիւն հոգւոց մերոց։

Ընդ այս փութացայ մատչել 'ի տեսութիւն ամենամաքուր եղբարց լայնածաւալ ծովու առատաբուղխ և աստուածային շնորհաց սուրբ եկեղեցւոյ, անբաւական գոլով 'ի յանդգնութիւն մանրախոյզ քննութեան, ահաբեկեալ 'ի բանէն զչափ անձին ոչ ճանաչելոյն։

Տկարատես մտաց մեր առաջի իրրև քաջացոյց գիտակ ունելով զաւետարանական

և զառաքելական ողջամիտ վարդապետութիւնս , ըստ կարի մեր փութացայ զսրբաբար խորհրդոյն եկեղեցւոյ նկատել զառաւելութիւն . և ներբին դիտողութեամբ խորհրդածեալ 'ի նոսա ուրոյն ուրոյն՝ փափագ հոգևոր բաղձանաց իմոց ստիպեաց զիս ցայս վայր , քարոզել զհիանալի մեծութիւն աստուածագործ արդեանց մարդասէր և փրկագործ տնօրէնութեան Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ :

Զի զիտասցես թէ որպէս պարտ իցէ քեզ 'ի տան Աստուծոյ շրջել . որ է եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ . սիւն և հաստատութիւն ճշմարտութեան :

= Տիմ . Գ . 15 :

ԳԼՈՒԽ Բ.

ՅՈԼՈՎ ԵԿԵՂԵՑՈՅ՝ ԻՆՉ ՔԱՂԱՔ ԷՐ։

Եկեղեցի բառս է յունական, և առուղարանի հրաւիրումն և կոչումն առ երեսի ինչ համախմբութիւն. վասն որոյ ժողով մարդկային բազմութեան առանց տարաձայնութեան 'ի մի վայր 'ի միաբանութիւն գումարելոյ՝ յաղագս միոյ իրիք խորհրդոյ և պաշտաման, կոչի եկեղեցի. զոր այսմ, "Յոյնքամ եկեղեցայոյց արքայ Սողոմոն զամենայն ծերս իսրայելի" Ա թագ. իբ. 1։

Այս ազնիւ անուն՝ խորհրդաբար նշանակէ զսեպհական ժողովուրդս Աստուծոյ, որք յատուկ կրօնիւ աստուածպաշտութեան և զանազան ծիսիւ արարողութեան միաբանին 'ի հաւատս աստուածգիտութեան, և համախմբին 'ի մի պաշտօն ծառայութեան անմխանելի արինայն Աստու-

ծոյ։ Որպէս էր 'ի հնումն ազգն իսրայէլի, որք պաշտէին զԱստուած՝ ճանաչելով զնա ամենակարող արարիչ և տէր, ինամարար ամենայնի. և միաբան հաւատոյին՝ եթէ գալոց է յաշխարհ մեսիան Քրիստոս վասն փրկութեան ամենեցուն։

Իսկ յորժամ եկն յաշխարհ 'ի լրման ժամանակի, և յայտնեցաւ մեծահրաշ և փրկարար խորհրդով իւրով, կամակոր մտօք յամառեալ 'ի շարութիւնս նախանձու և հպարտութեան՝ կուրացան կուրութիւն մտաց. և ոչ իսկ ծանեան զնա, և ոչ ընկալան զլոյս սքանչելի փրկութեան 'ի հոգիս իւրեանց, վասն որոյ և զրկեցան յաւետարանական երանութենանց և օտարացան Աստուծոյ և յարքայութենէն փառաց։ "Իսկ արդ՝ զոր խնդրէրն Իսրայէլ, այնմ ոչ եհաս". (Հռով. ժա. 7)։ Եւ վասն սոյին ողբալի կուրութեանց և թշուառատոյն գնացից անօրէնութեան, կանխաւ խօսեցաւ մարգարէն Եսայի. "Օձանապարհն խաղաղութեան ոչ ծանեան, և ոչ զոն իրաւունք 'ի ճանապարհս նոցա. զի

շաւիղք նոցա՝ ընդ որ գնան, խոտորեալք են, և ոչ ծանեան զիաղաղութիւն. վասն այնորիկ հեռացան 'ի նոցանէ իրաւունք, և մի՛ հասցէ առ նոսա արդարութիւն. մինչ-դեռ ակն ունէին լուսոյ՝ եղև նոցա խաւար, և մինչդեռ սպասէին նմա՝ ընդ մութն շրջեցան". (ծթ. 8)։ Այս վասն չարաչար մոլորութեան և կամակոր կուրութեան նոցին և Յօր ասաց մարգարէարար. "'Ի տուէ պատահեսցի նոցա խաւար, և 'ի միջօրէի իբրև 'ի գիշերի խարխափեսցին". Ե. 14։

Բայց 'ի նորումն ամենայն ազգ հաւատացելոց միախորհուրդ գտան 'ի յաւիտենական Ճշմարտութիւնս՝ և միաժողով 'ի քրիստոնէական արքայան կրօնս, որք միաբանութեամբ հաւատան և խոստովանին՝ եթէ Քրիստոսն է որդի Աստուծոյ կենդանւոյ և Ճշմարտի. ըստ այնմ, "Դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ կենդանւոյ. (Մատ. ժզ. 16)։ Մեք հաւատացաք և ծանեաք, եթէ դու ես Քրիստոս որդի Աստուծոյ". Յոհ. զ. 70։

Քրիստոնէից այս ուղղափառ դաւանու-

թիւն , է զուն ասուածային երանութեանց , ժառանգաւորութիւն զանազան շնորհաց և անշարժելի հիմն սուրբ եկեղեցւոյն Քրիստոսի։ "Ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ". Մատ. ժզ. 18։

Այս իրաւամբ ժողով քրիստոնէից ասի և է եկեղեցի Քրիստոսի. զի ընկալաւ զամենայն հոգեւոր բարիս և զշնորհս սրբարար խորհրդոցն Քրիստոսի. և ցուցանէ զառաքինական գործս զարժանացուցիչս փառացն արքայութեան։ Յորմէ օտարացաւ, մերժեցաւ, ժողովն հրէից լցեալ կամեսպաշտութեամբ և նախանձու. վասն որոյ Յիսուս՝ առ յանդիմանութիւն նոցա, և առ հաստատութիւն յուսոյ քրիստոնէից՝ ասաց. "Վասն այսորիկ ասեմ ձեզ, զի բարձցի 'ի ձէնջ արքայութիւնն Աստուծոյ և տացի ազգի, որ առնիցէ զպտուղս նորա". Մատ. իա. 43։

Եկեղեցին է խորհրդական մարմին Քրիստոսի, յօդակապեալ ընդ նմա հաւատով և սիրով. և իւրաքանչիւր հաւատացեալք են իբրև անդամք պատշաճապէս

գաստուրեաքք, որք ընդունին զանձուն հա-
գեորական և զջորութիւն 'ի գերբնական
պարգևացն Քրիստոսի, որ ընդհանրական
և ինքնիշխան գլուխ է 'ի վերայ եկեղեց-
ւոյն իւրոյ. զոր օրինակ 'ի մարդկային մար-
մինս ամենայն կենդանական և զգայական
ազդմանց և ներգործութեանց՝ գլուխն է
սիրտն, այնպէս և խորհրդական մարմին
Քրիստոսի՝ եկեղեցին, զամենայն կենդանա-
բար ներքին զօրութիւնս շնորհաց և գներ-
գործութիւնս հոգևոր ազդմանց 'ի գերամ-
բարձ գլխոյ իւրմէ 'ի Քրիստոսէ առնու
լրապէս. ըստ այնմ՝, "Այլ զնա եդ գլուխ
'ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ, որ է
մարմին նորա, և լրումն՝ որ զամենայն յա-
մենայնի լնու". Էփես. ա. 22։

Օ. Քրիստոս գլուխ եկեղեցւոյ խոստամա-
նիմք կրկին խորհրդածութեամբ։ Նախ՝ զի
ունի տիրապէս և ըստ ամենայնի իրաւունս
իշխելոյ և տիրելոյ 'ի վերայ եկեղեցւոյ
իւրոյ, 'ի վերայ ամենայն հաւատացելոյ.
վասն զի փրկեաց զամենեսին իւրով խակ
փրկարար արեամբ 'ի դատապարտութենէ

մեղաց, և անպարտական մահուամբն ապ-
բեցոյց, և կորզեաց 'ի ձեռաց դժոխոց.
մանաւանդ և բազմաշնորհ արդեամբ կա-
մաւոր չարչարանաց իւրոց հաղորդս կա-
ցոյց զամենեսին իւրոյ իսկ ասուածային
բարեացն և փառաց։ "Տուաւ ինձ ամ-
ենայն իշխանութիւն յերկինս և յերկրի.
(Մատ. իը. 18)։ Քրիստոս սիրեաց զե-
կեղեցի. և զանձն իւր մատնեաց վասն
նորա, զի զնա սրբեսցէ սրբութեամբ ա-
ւազանին բանիւ, զի կացուցցէ ինքն իւր
յանդիման փառաւոր զեկեղեցի". Եփես.
Ե. 25. 26. 27։

Նոյնորդ՝ զի միայնակալ է Քրիստոս ընդ
եկեղեցւոյն կենդանացուցիչ շնորհաք և ա-
ռանձին սիրով. և մինչև ցկատարած աշ-
խարհի և յաւիտեան ոչ բաժանի 'ի նմանէ.
այլ իբրև զլուսն՝ ներքին կենդանական ազդ-
մամբն խնամէ զաստուածական մարմին իւր
զեկեղեցի, առաջնորդելով յամենայն ճա-
նապարհս փրկութեան. լուսաւորելով ճըշ-
մարտութեամբ աւետարանին. զօրացուցա-
նելով 'ի կատարելութիւնս առաքինական

գործոց առ 'ի ժամանակուցանել յերանութիւնս փառաց երկնից արքայութեան։ "Այս ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի։ (Մատ. իբ. 20)։ Այս թէ՝ ուշ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ 'ի մէնջ. զի նովաւ կեանք և շարժիմք և եմք"։ Գործ. ժէ. 27։

Ահա սոքօք յայտնի երևի, եթէ Քրիստոս է ընդհանրական գլուխ եկեղեցւոյ, ինքնիշխան հրամայող, ծայրագոյն իշխող, ներքին կառավարիչ և արդարաքննին գատաւոր ամենեցուն. իսկ առաքեալք՝ և օրինաւոր յաջորդք նոցին՝ անուանին և են փոխանորդք Քրիստոսի և կամ պաշտօնեայք նորին, ևս և երևելի այսպէս կամ հոգաբարձուք եկեղեցւոյն Քրիստոսի. ահա յայտնի վերածին բանս վկայութեան։ "Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի. (Մատ. ժ. 40)։ Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ իբրև զպաշտօնեայս Քրիստոսի և հաղարապետս խորհրդոցն Աստուծոյ. (1 Կորն. դ. 1)։ Արածեցէք որ 'ի ձեզ հօտդ է Աստուծոյ. վերակացու լինել՝ մի' իբրև

ակամայ՝ այլ կամաւ ըստ Աստուծոյ». ii. Կաթու. Պետ. Ե. 2.

Դարձեալ Եկեղեցին սուրբգրական սահմանաւ բացայայտ իմն սահմանի ըստ անհրաժեշտ աւանդութեան աստուածաբանիչ՝ այսպէս. «Եկեղեցին է ընտրեալ ժողով հաւատացելոց. ունող զսրբազան կնիք մկրտութեան. և է միաբանեալ 'ի միութեան հաւատոյ աւետարանական Հրշմարտութեան. 'ի հաղորդակցութեան արդարացուցիչ խորհրդոցն Քրիստոսի, և 'ի պաշտամունս ծառայութեանն Աստուծոյ. և է միշտ պաշտպանեալ անսխալելի խնամօք 'ի Քրիստոսէ 'ի կենդանացուցիչ զլխոյ իւրմէ. և երևելի այցելութեամբ կատարելեալ յեպիսկոպասաց յօրինաւոր յաջորդաց սրբազան առաքելոց անտի»։

«Ժողով ասացաւ», որով յայտնի լինի, եթէ եկեղեցին է միաբանութիւն հաւատացեալ մարդկան տարածեալ և սփռեալ յամենայն աշխարհ և անբաժան 'ի սրբազան կրօնս քրիստոնէական Հշմարտութեան։

«Ունող զՍրբազան կնիք մկրտութեան»

ասելով, արտաքոյ քրիստոնէական եկեղեցւոյ մնան հրեայք և հեթանոսք մոլորեալքն, որք են միշտ 'ի վիճակի դատապարտութեան։

"Միաբանեալ 'ի միութեան հաւատոյ աւետարանական ճշմարտութեան" ասելով, 'ի բաց մերժին յեկեղեցւոյ հերետիկոսք և ուրացողք ճշմարտութեանն Քրիստոսի։ Որպիսիք են Արիոս, Նեստորիոս և Աղենդէս և Գայիոս. որք արարած ասացին զորդին Աստուծոյ զՅիսուս Քրիստոս, և յետ ժամանակի գոյացեալ յաշխէ և կամ յայլմէ էութենէ և ոչ յԱստուծոյ Հօրէ անժամանակաբար ծնեալ որդի յաւիտենական. որոց սակի էր և ամբարիշտն Մակեդոն, որ ուրացաւ զլինելն սուրբ Հոգւոյն Աստուծոյ, հաւասար և փառակից Հօր և Որդւոյ. նման սոցա են 'Նեսաոր Նեստորէս և այլ չարափառք՝ որք չարաչար բանս վիժել յանդգնեցան ընդդէմ աւետարանական բացայայտ ճշմարտութեան. վասն որոյ յանդգամոյ եկեղեցւոյ 'ի բաց հերքեցան նզովեալք ուղղափառ սրբազան Հայրապետաց

'ի մէջ տիեզերական, սուրբ և հոգեզումար ժողովոց։

"Ի հաղորդակցութեան արդարացուցիչ խորհրդոցն Քրիստոսի ասելով", յայտնի ցուցանի թէ ոչ որ 'ի յանդամոց եկեղեցւոյ արտաքսիցի 'ի մասնակցութենէ սրբարար խորհրդոցն, բայց միայն յամառելոք 'ի չարիս և իրաւամբ բանադրեալք ըստ յանցանացն իւրեանց, որք չունին և համարձակութիւն մերձիլ առ սրբարար խորհուրդս եկեղեցւոյն և վայելել զշնորհս։

"Եւ 'ի պաշտամունս ծառայութեանն Աստուծոյ" ասելով, նշանակի վախճանական գործ եկեղեցւոյ, որով ընդունի Աստուծոյ զպատակ երանութեան. որմէհետև եկեղեցին կիրէ և ճանաչէ զդերազանց մեծութիւն Աստուծոյ՝ զշնորհեալ զերբնական պարգևս նորին, և զպատրաստեալ զերանաւէտ փառսն. վասն որոյ փութայ միշտ 'ի պաշտօնի երկրպագութեան Աստուծոյ զտանիլ՝ և յառաջանալ 'ի ծառայութիւնս ամենաբարի կամաց նորին։

"Եւ պաշտպանեալ աներևոյթ խնամաք

'ի քրիստոսէ 'ի կենդանացուցիչ գլխոյ իւրմէ" ասացաւ . վասն զի եկեղեցին է բարոյական մարմին Քրիստոսի հաւատով և սիրով միացեալ ընդ նմա . և ինքն Քրիստոս է գլուխ եկեղեցւոյ , ընդհանրապէս զօրացուցիչ և սրբացուցիչ ամենեցուն ներքին բարերարութեամբ ։ Իսկ զարտաքին կառավարութիւն և զայցելութիւն եկեղեցւոյն յանձնեաց առաքելոց իւրոց և նոցին յաջորդաց եպիսկոպոսաց և երիցանց . վասն որոյ ասացաւ 'ի վախճանի , "երևելի այցելութեամբ կառավարեալ յեպիսկոպոսաց , յօրինաւոր յաջորդաց սրբազան առաքելոց" ։ "Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոս . մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ , ուսուցէ՛ք նոցա պահել զամենայն զոր ինչ պատուիրեցի ձեզ . (Մատ . իբ . 19 , 20) ։ Օ երիցունս այսուհետև աղաչեմ , իբրև երիցակից՝ և վկայ չարչարանացն Քրիստոսի . որ և հանդերձելոց փառացն յայտնելոց հաղորդ . արածեցէք՝ որ 'ի ձեզ հօտդ է Աստուծոյ" . ա Պետ . Ե . 1 ։

ԳԼՈՒԽ Բ

Յաղագս սկզբանց աշխարհի Նիւթոյ։

Ի սկզբան աշխարհի հաստատեաց Աստուած զերկինս եւ զերկիր, կոչեալ զապագայ մարդկան՝ ներքին եւ արբազան իմն ազգեցութեամբ 'ի կրօնս աստուածգիտութեան՝ եւ աստուածպաշտութեան, եւ յայտնելով ամենեցուն զհարկաւորն եւ զկարեւորն առ ծանօթութիւն Աշխարհութեան եւ առ կատարումն կամաց իւրոց. սկսեալ 'ի նահապետաց անտի մինչեւ ցլրումն մարգարէից՝ տարածէր զհարկաւոր գիտելիս աստուածպաշտութեան. ոչ միայն միւսմ ումեք յայտնելով զանխախտակ խորհուրդս աստուածպաշտութեան, որ ունէր կատարելագործիլ շնորհիւ մարդեղութեան Յիսուսի Քրիստոսի, այլ ընդ ժամանակս զանազան անձանց՝ զանազանս մատակարարէր. զոր օրինակ՝ զայլ ինչ Աստուծոյ, եւ զայլ ինչ Նոյի. զայլ ինչ տնտեսութիւն խորհրդոյ աս-

աստուածպաշտութեան յանձնեաց Աբրահամու, և զայլ յայտնութիւնս արար Տաճկաց. առ իբրաքանչիւր նահապետս և մարգարէս մասնաւոր ազգեցութիւնս առնելով. որք ամենքին հայէին առ մի խորհուրդ աստուածային անօրէնութեան և մարգասիրութեան։ "Բաղում մատամբք և բազում օրինակաք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարս մեր մարգարէիւք". Եբր. ա. 1։

Որպէս միշտ անպակաս գտաւ ծաղկեալ խորհուրդ աստուածպաշտութեան ընդ դարս դարս. թէպէտ երբեմն երևէր խաւար կռամոլ ապիտութեանն, բայց լուսաշաւիղ պայծառութիւն խորհրդոյն աստուածպաշտեան յեկեղեցւոյն Աստուծոյ անպակաս լինելով փարատէր հաչածէր զխաւարամած մառի պաշտամունս՝ յանդիմանեալ զմոլար կարծիս հեթանոսութեան։ Որ օրինակ մարգարէն Եզեկիա վառեալ նախանձու աստուածային Աշմարտութեան զամօթի և հար զարքայն Բաբել, որ պաշտէր զկուռս Բահաղու և զաստղամն 'ի ժողովրդոյն իսրայէլի յօժարեցուցանէր առ այն կռամոլութիւն

սուտ մարգարէիւք։ Զի սրտահաճաչ ա-
զօթիւք նորին ակնարկ ցուցաւ 'ի հանդիսի
ամենեցուն ամենակարող զօրութիւն Ճըշ-
մարտին Աստուծոյ. վասն որոյ և ամենայն
ժողովուրդն անկեալ 'ի վերայ երեսաց իւր-
եանց յերկիր՝ աղաղակելով խոստովանէին
այսպէս։ "Արդարև տէր՝ նա է Աստուած.
տէր նա է Աստուած". (գ. թագ. ժը. 39)։
Ահա ասմանօր ծագեալ լոյս աստուած-
պաշտութեան ուղիղ կրօնից փարատեաց
զխաւար կռամոլութեան։ "Ծագեաց 'ի խա-
ւարի լոյս ուղղոց. ողորմած՝ զթած՝ և ար-
դար է տէր". Սաղ. ճԺա. 4։

Եկեղեցիս այս պաշտպանեալ լինէր 'ի
սկզբանէ անտի յաստուածային այցելու-
թենէ և 'ի զանազան խնամոց, առ 'ի մեալ
ազատ 'ի վիճակէ անաստուածութեան. քան
զայսմ՝, "Զիշեա զժողովուրդ քո զոր ստա-
ցար 'ի սկզբանէ, փրկեցեր զվիճակ ժառան-
գութեան քո". Սաղ. հգ. 2։

Սովիմբ ցուցանի մշանջենաւորութիւն
եկեղեցւոյն Աստուծոյ. որպէս բացատրէ
Եղնիկ կողբացի (Գիրք. գ. 229). յասելն.

"Եկեղեցի Աստուծոյ 'ի սկզբանէ աշխարհի էր, զորմէ և Դաւիթ 'ի հոգւոյն սրբոյ ուսեալ մատուցանէր զաղօթս՝ թէ յիշեա զեկեղեցի քո՝ զոր ստացար 'ի սկզբանէ"։ Այս եկեղեցի՝ անուանի հին եկեղեցի, որոյ անդամք էին ազգք իսրայէլացւոց. որք թէպէտ ունէին զաստուածպաշտութիւն զրական կամ՝ մովսիսական օրինաց, բայց և անկատար էին 'ի ծանօթութիւնս աստուածգիտութեան։

Իսկ քրիստոնական եկեղեցին կոչի նոր եկեղեցի. որոյ անդամք են Հաւատացեալք սրանչելի մարգեղութեան և փրկարար սքանչելագործութեան Յիսուսի Քրիստոսի. և մկրտեալք յանուն ամենասուրբ Երրորդութեան. որով ունին զկատարեալ աստուածգիտութիւն 'ի Հայրն ամենակալ՝ 'ի Որդին միածին և 'ի սուրբ Հոգին յանեղն և 'ի կատարեալն. և հետևելով կատարելագոյն ուսման լուսաշաւիղ Ճանապարհին աւետարանական ճշմարտութեան՝ ընդունին զքրիստոնէական ողջամիտ և կատարեալ վարդապետութիւնս քարոզեալս 'ի սրբազան

աւետարանչաց և յառաքելոց . ըստ այնմ "Զոր մեքն քարոզեմք և խրատեմք զամենայն մարդ և ուսուցանեմք զամենայն մարդ ամենայն հոգևոր իմաստութեամբ . զի կացուցցուք զամենայն մարդ կատարեալ 'ի Քրիստոս Յիսուս": Կողոս . 1 . 28 :

ԳԼՈՒԽ Գ

Օշականումն հին եկեղեցոյ ընդ նորս։

Հին եկեղեցին զազգն հրէից՝ ընդ նոր եկեղեցւոյս ընդ քրիստոնէից բաղդատեալ, զտանեմք բազմատեսակ թերութիւնս և պակասութիւնս՝ի հին եկեղեցին՝ յազգն հրէից։

Այս՝ կարեմք կոչել զնա եկեղեցի սկզբնական և հանդերձեալ առ վայելս ապագայ շնորհաց և փառաց գոյսեան մեծոյին՝ Յիսուսի կենդանարարին մերոյ, որ իբրև եկն յաշխարհ՝ ասաուածասէրս հրաշագործութեամբն յայտնի իսկ առնէր ամենեցուն եթէ ինքն էր Յիսուս փրկիչն աշխարհի, յոյր վերայ և մարգարէիցն բանք վկայեին թէ նա է Քրիստոս, որ առաքեալ վերկիր և կեցուցիչ հրէից և հեթանոսաց։ Իսկ ապաստամբեալ հրէից՝ի շնորհաց նորին և՝ի փառաց, և անդր քան զչափ զառածեալ՝ի կուրութիւնս կամաց իւրեանց, զինեցան

Կարդ 3408

նախանձու և ատելութեամբ ընդդէմ Յի-
սուսի . մինչ զի անիրաւ զրպարտութեամբ
և 'ի մահ խաչի դատապարտել ժողովեցան ,
որով խոպան մերժեցան 'ի փրկարար շնոր-
հաց անտի , և զրկեցան յամենացանկալի
փառաց նորին աստուածութեան . "Յիւրան
եկն , և իւրքն զնա ոչ ընկալան . (Յօհ . ա .
11) . Ամ իսրայէլ երթայր զհետ օրինացն
արդարութեան՝ և յօրէնս արդարութեան
ոչ ժամանեաց". Հռով . թ . 31 .

Իսկ զնորա այս քրիստոսական սուրբ ե-
կեղեցի՝ արժան է անուանել եկեղեցի կա-
տարեալ 'ի խորհուրդս փրկութեան , և ժա-
մանեալ առ շնորհս որդեգրութեան Հօրն
Աստուծոյ , և առ ժառանգաւորութիւն ե-
բրանական փառաց աստուածատեսութեան .
որովհետև քրիստոսական սուրբ եկեղեցի
խոստովանի և հաւատայ 'ի փրկարար մար-
դեղութիւն կենարարին Յիսուսի , և յաս-
տուածազործ արանչելիսն և 'ի շնորհաստիւռ
Հշմարիտ վարդապետութիւնս նորին , և
յուսայ դատանել զմոռղութիւն մեղայ 'ի ձեռն
զոհման արդեամբ կամաւորական մահուան

և անպարտական խաչին Յիսուսի փրկչին մերոյ։ "Իսկ որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոց հաւատացին յանուն նորա։ (Յօհ. ա. 12)։ Հեթանոսք՝ որք ոչ երթային զհետ արդարութեան՝ հասին արդարութեան։ այսինքն արդարութեան՝ որ 'ի հաւատոց անսի"։ Հռ. թ. 30։

Երկրորդ՝ հին եկեղեցին միայն զօրինակ և զձևակերպութիւնս տեսանէր ապագայ փրկարար խորհրդոցն Քրիստոսի։ և այն 'ի ձեռն ծառայիցն Աստուծոյ մարգարէիցն և նահապետաց՝ այլևայլ եղանակաւ յայտնեալ, էր որ օրինակաւ նմանութեան, և էր որ մասամբք բանից տեսութեան։ զոր օրինակ զկուսական ծնունդն իւր երևեցոյց օրինակաւ 'ի ձեռն Դանիէլի, "ի վէմն հատեալ 'ի լեռնէն առանց ձեռին"։ (Դանի. բ. 45)։ Իսկ մարգարէին Եսայեայ յայտնի բանիւ։ "ահա կոյս յղասցի և ծնցի որդի"։ է. 14։

Օխորհուրդ փրկարար խաչելութեանն յայտնեաց Աբրահամու, 'ի հրաման անդր

զենմանն Խաչակայ. որոյ փոխանակ խոյն կախեալ 'ի սաթենկայ ծառոյն. (Ծն. իբ. 13) ըստ այնմ՝ "Աբրահամ ցանկացաւ տեսանել զօրն իմ (այսինքն զօրինակն), եւ տես և ուրախ եղև". (Յօհ. ը. 56)։ Իսկ այս պարզ բանիւ մարգարէութեանն Նշայեայ յայտնագոյն և քարոզեցաւ, թէ "Իբրև գոչխար 'ի սպանդ վարեցաւ. և իբրև զորոջ առաջի կտրչի անմռունչ կայ. այնպէս ոչ բանայ զբերան իւր". ծգ. 7։

Ահա այսորիկ ամենայն 'ի ձեռն մարգարէից և նահապետաց նախագուշակեալ լինէին 'ի հին Եկեղեցւոջ. այլ ոչ արդիւնաւորեալ բերէին զշնորհս և զփառս արքայարար և փրկագործ խորհրդոյն փրկչին Յիսուսի։ Իսկ 'ի նորս յայս սուրբ Եկեղեցին Քրիստոսի, յայտնեցաւ այս ամենայն խորհուրդ փրկութեան. ոչ ընդ օրինակաւք՝ այլ յայտնի տեսութեամբ ստուգածային անժխտելի արանչելեաց և շնորհաց և Հշմարտագոյն խոստմանց յաւիտենական երանութեան. ոչ մասնաւոր ինչ ծանօթութեամբ և կամ ընդ աղօտ տեսութեամբ, այլ լիուլի

անթելի և բուսատարածին յայտնութեամբ. ոչ 'ի ձեռն մարգարէից և նահապետաց, այլ 'ի ձեռն տեառն շնորհաց և հեղինակին ճշմարտութեան Յիսուսի կենդանարարին մերոյ "Բազում մասամբք և բազում օրինակաք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարս մեր մարգարէիւք. 'ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդւովն զոր եդ ժառանգ ամենայնի, որով և զյաւիտեանս արար". (Հբր. ա. 1): Բայց ձեր երանի է աչաց զի տեսանեն, և ականջաց ձերոց զի լսեն. ամէն ասեմ ձեզ զի բազում մարգարէք և արդարք ցանկացան տեսանել զոր տեսանէքդ՝ և ոչ տեսին. և լսել՝ զոր լուայքդ՝ և ոչ լուան". Մատ. ժգ. 16:

Նշորդ՝ հին եկեղեցին չունէր զներքին ճշմարիտ սրբութիւն և ազատութիւն 'ի սկզբնական մեղաց, և 'ի ներգործականաց. զի թէպէտ վասն մեղաց մատուցանէին զգոհս և զպատարագս ողջակիզաց, բայց ոչ բնաւ հաճելիք եղեն Աստուծոյ առ փրկութիւն մեղաց նոցին. այլ համարիւր իրրև գործ ինն բարեպաշտութեան և ցոյց առաւած-

պաշտութեան . մանաւանդ տիպ և օրինակ Ճշմարիտ պատարագին Քրիստոսի , որ մատուցաւ 'ի վերայ փրկաւէտ սեղանոյ խաչին 'ի քաւութիւն մեղաց մերոց . որպէս եղև առ Մովսէսիւ , (Ելք . Թ . 24) . առ Դեղէոնիւ՝ (Դատ . ԺԸ . 21) . և առ Նգիայիւ , (Գ . Թագ . ԺԸ . 38) : Այս ամենայն մատուցմունք պատարագաց չունէին զօրութիւն բառնալոյ և տալոյ զստացումն ներքին սրբութեան . ըստ այնմ՝ "ընդ ոչխս և ընդ պատարագս ոչ հաճեցար . ականջս հաստատեցեր ինձ՝ զողջակէզս՝ և զվասն մեղացն ոչ խնդրեցեր . (Սաղ . Լ Թ . 7) : Քանզի ոչ կարէր արիւն նոխազայն և ցլոյ բառնալ զմեղս". Նբր . Ժ . 4 :

Բայց նորս այս եկեղեցի Քրիստոսի ժողովք հաւատացելոց , ունի զիատարեալ ներքին սրբութիւն և փրկութիւն 'ի մեղաց , արդեամբ Ճշմարիտ պատարագին անբիծ և անարատ դառին Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի . որ բարձեալ զմեղս աշխարհի պատարագեցաւ 'ի վերայ խաչին , և անպարտաւորեան մահուամբն ազատեաց զմեզ 'ի պղծու-

թենէ մեղաց սրբեալ արդարացուցիչ արեամբ իւրով, և արար զեկեղեցի իւր հաղորդս սրբութեան իւրոյ և արդարութեան, որով ստացաւ սուրբ եկեղեցին քրիստոնէից զսրբութիւն անմեղութեան և անարատութեան զառին Աստուծոյ։ "Ահաւասիկ գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի. (Յոհ. ա. 29)։ Որով կամաք և մեք սրբեցաք 'ի ձեռն պատարագի մարմնոյն Յիսուսի Քրիստոսի միանգամ. (Նբր. ժ. 10)։ Արիւնն Յիսուսի որդւոյ նորա, սրբէ զմեզ յամենայն մեղայ". Յոհ. ա Կաթ. ա. 7։

Զորրորդ՝ հին եկեղեցին չունէր հաղորդակցութիւն ընդ գերբնական յաւիտենական և աստուածային կենդանութեան. ըստ որում տակաւին չէր 'ի նմա աղբերացեալ և հեղեալ սրբարար շնորհքն աստուածային, որով և մարմի լինէր նոցա և հնարաւոր ստանալ որամադրութիւն և պատրաստութիւն առ ընդունակ լինելոյ հոգևոր և երանական կենդանութեան. զոր օրինակ որպէս մարմին թափանցիկ՝ որպիսի է օդ, ջուր և ապակի, կարէ ընդունիլ զլոյս արևու

և որ ոչ ունի զմեափանցական զօրութիւն՝ իրաւամբէս անընդունակ է լուսոյ . այսպէս և ազգն իսրայէլի չունելով զաւետարանական կատարելութիւնս և շնորհական օրէնս, որ տրամադրէ զմարդ առ զերբնական լոյս յաւիտենական կենդանութեան, զրկեալ էին և անընդունակ անմահ երանութեան . վասն որոյ նմանութեամբ խօսելով Դաւիթ յուցանէր զայս պակասութիւն հին եկեղեցւոյն յորում՝ էր և ինքն . "Ի քէն է աչք աղբիւր կենաց և լուսով երևաց քոյ անսանելք զլոյս". Սաղ . ի . 10 :

Բայց նոր եկեղեցին Քրիստոսի հաղորդ զաւ հոգևոր անմահ կենդանութեան աստուածային երանութեան, 'ի ձեռն շնորհական օրինաց աւետարանական կատարելութեան . զի այն շնորհ սրբարար՝ որ 'ի ձեռն Յիսուսի տացաւ, արար ընդունակ և հաղորդ աստուածային զերբնական կենդանութեան : Զատ այժմ տիրապէս և իրաւամբ ունի եկեղեցին Քրիստոսի՝ ժողովն հաւատացելոց, 'ի շնորհացն Քրիստոսի ընկալեալ զհոգևոր և զերանաւէտ կենդանու-

թիւն. ըստ այնմ, "Դու կենդանի եմ և դուք կենդանի լինելոց էք. (Յօհ. ԺԴ. 19)։ Դու կեանքն յայտնեցաւ, և տեսաք՝ և վկայեմք՝ և պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն, որ էր առ Հօր՝ և երևեցաւ մեզ. ա Կաթ. Յօհ. ա. 2։

Հինգերորդ՝ հին եկեղեցւոյ ժողովրդոց միայն զերկրաւոր բարիս խոստանայր ամենաբարին Աստուած. վասն զի չունէին զժառանգաւորութիւն երկնաւոր բարութեան. զորով նոցա տակաւին 'ի վիճակ տարամերժութեան յերկնաւոր անանց և յաւիտենական բարեացն և փառաց. ուստի եթէ հարկ լինէր Աստուծոյ զարժանաւոր ոք պատկել բարութեամբ, զերկրաւոր բարիս միայն խոստանայր և զանցաւորս և եթէ յուցանէր ժառանգել, զմարմնաւորսն և ոչ զհոգևորսն տալ կամէր նոցա. վասն որոյ Աբրահամու՝ որ արժանի եղև պարգևս ընդունել Աստուծոյ, տակս բոլորանուէր հնազանդութեան իւրոյ, տես զի՞նչ տեսակ պարգևաց խոստանայ նմա Աստուած. "Օրհնելով օրհնեցից զքեզ, և բազմացուցանելով

բաղմացուցից զգաւակ քո իբրև զաստեղս երկնից բազմութեամբ , և իբրև զաւազ առափն ծովու . և ժառանգեսցէ զաւակ քո զդաղաքս հակառակորդաց իւրոց". (Ծն. իբ. 17): Այնպէս և նահապետին Յակոբայ զոր սիրեաց , յորմէ՝ մնն զնա ընտրեալ , խոստանայ 'ի նշան յատուկ սիրելութեան , զմարմնաւոր և զերկրաւոր բարիս : "Եվ զերկիրդ յորում դուդ ննջեցեր , քեզ տայց զդա և զաւակի քում . և եղիցի զաւակ քո իբրև զաւազ երկրի . և ընդարձակեսցի 'ի ծովակողմն , և ընդ արևելս , և ընդ հիւսիս , և ընդ հարաւ". (Ծն. իբ. 13): Նոյնպէս այսմ է և երկրորդ Օրինաց՝ (Ե. 32): "Զոյշ լերուք առնելոյ՝ որպէս պատուիրեաց քեզ տէր Աստուած քո . և մի՛ խոտորիցիս յաջ , և մի՛ յահեակ . ըստ ամենայն Հանապարհին՝ զոր պատուիրեաց քեզ տէր Աստուած մեր գնալ . զի հանգուցցէ զքեզ՝ և բարի պատցէ քեզ , և երկայնօրեայք լինիցիք յերկրին զոր ժառանգիցէք":

Իսկ նոր եկեղեցւոյս՝ քրիստոնէից , խոստանայ Յիսուս զերկնային և զյաւիտենական

բարիս . ոչ զանցաւոր կեանս այս աղցաւոր կենցաղոյս ցուցանէ ժառանգել հեռեղաց իւրոց , այլ լուսով աւետարանական վարդապետութեան իւրոյ՝ առաջնորդէ 'ի կեանս յաւիտենականս , և ասէ համարձակութիւն ենկեղեցւոյ իւրոյ հայցել և խնդրել զերկնից բարութիւնս և զամենայնկարի փառս արքայութեան իւրոյ . որովհետև քրիստոնէական շնորհ՝ որ յայտնեալ և ստեալ է 'ի նորս այս սուրբ ենկեղեցւոջ , ասէ ամենեցուն աներկրայ լուսով՝ հոգւով և սրտիւ խորհիլ և ակնունիլ երանաւէտ վայելման երկնից արքայութեան՝ և աստուածային յաւիտենականն փառաց : "Այս եմ՝ ըստ աշխարհի . որ գայ զինի իմ՝ , ընդ խաւար մի՛ գնասցէ , այլ ընկալցի զլոյսն կենաց . (Յոհ . Ը . 12) : Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ և զարդարութիւն նորա , և այդ ամենայն յաւելցի ձեզ . մի՛ այսուհետև հոգայցէք վասն վաղուին՝ զի վաղիւն վասն իւր հոգասցի . (Մատ . Զ . 33) : Քանզի երևեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան . որ խրատէ

զմեզ՝ զի ուրացուք զամբարշաւութիւն և զաշխարհական ցանկութիւն. զդաստութեամբ և արդարութեամբ և աստուածպաշտութեամբ կեցցուք յաշխարհի. և ակնկալեցուք երանելի յուսոյն և յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի". Տիտ. բ. 11։

Բայց 'ի սոյնց և զբազումս զտանեմք զանդրժելի ապացոյցս անջրպետութեան և խորոցի հին եկեղեցւոյ իսրայէլացւոց ընդ նորոյս սուրբ եկեղեցւոյ քրիստոնէից. նա միայն զաստուածային ունէր զտեսութիւն, իսկ սա ներկայ ունի զանմխաթելի ճշմարտութիւն. նա 'ի յանցաւոր վիճակի դատապարտութեան էր, իսկ սա յարդարացեալ վիճակի փրկութեան կայ. նա հեռաւոր մնայր յաստուածային գերբնական պարգևաց և շնորհաց, իսկ սա կարի մերձաւոր զտաւ ամենայնի և ժառանգաւոր։ Ինքեսցի աստանօր բաղդաւորութիւն մեր բանիւ սրբազան առաքելոյն Պօղոսի. եթէ "Այսուհետև ոչ էք օտարք և պանդուխտք. այլ քաղաքակիցք սրբոց, և ընտանիք Աստուծոյ". Եփես. բ. 19։

ԳԼՈՒԽ Գ

ԵՒ-ԷՆ ՔՈԺՈՒՆ ՅԵՐԻՑ։

Զախ՝ 'ի զինուորեալ. որովհետև յերկրի ասա բարոյական մարմին Քրիստոսի՝ հաւատացեալք՝ որք անուանին եկեղեցի Քրիստոսի, են զինուորեալ հոգևոր անպարտելի և ամենազօր զինու աւետարանական նոր օրինաց և սրբոյ Հոգւոյն Աստուծոյ շնորհաց. և սոքօք կարողանայ եկեղեցին զօրանալ ընդդէմ սատանայական մոլութեանց և մարմնական հեշտութեանց. սոքօք արիանայ յաղթահարել և վարել զարբանեակս սատանայի զայսմանի կամակոր հակառակողս ընդդէմ բացայայտ ճշմարտութեան աւետարանական սրբազան բանից, ակն յանդիման բարձրացուցեալ զաբանչելի դրոշակ ուղղափառ քրիստոնէութեան՝ ունելով առաջի զամենայաղթ զօրագլուխ իւր զտէր Յիսուս. սոքօք հանդիսանայ քաջամարտիկ եկեղեցին 'ի բարոյ-

ական և 'ի հոգևորական պատերազմունս քակելով զամուրս և կործանելով զամրոցս հոգեկորոյս մոլութեանց, երկրահակ և մարձեաւոր խորհրդոց և շարաչար մտրութեանց ճշմարտակրօնս ազանդաւորաց։ Այսու զինուորութեամբ պաշտպանի եկեղեցին յամենայն հակառակամարտից յարձակմանց, և յապահովութեան մնայ 'ի ճշմարիտ և յուղղափառ հաւատս քրիստոնէութեան և 'ի սրբազան ասառածպաշտութեան։ և յուսով մեծաւ տեսանէ զերանական փառաց պսակն հանդերձեալ և պատրաստեալ։ այսու երանելին Պօղոս քաջալերէր զեկեղեցին յասելն։ "Այսուհետև զօրացարուք տէրամբ և կարողութեամբ զօրութեան նորա։ և զդեցարուք զսպառազինութիւն Աստուծոյ։ զի կարող լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի (Եփես։ ՟Ա։ 10)։ Օ՛էն զինուորութեան մերոյ ոչ է մարմնաւոր։ այլ զօրաւոր ՅԱստուծոյ, առ 'ի քակելոյ զամուրս հռ։ Բ Կորն։ Ժ։ 4։

Երկրորդ՝ բաժանի 'ի յաղթական։ զի

հաւատացեալք մինչ յաշխարհի ասա են. իբրև զինուոր՝ ապատազինեալ շնորհիւ Քրիստոսի, և քաջութեամբ վանեալ զամենայն ընդդիմամարտս սատանայի հոգւոյ՝ և արդարութեամբ եկեալ 'ի մարմնոյ, լինին միաւորեալ ընդ Քրիստոսի և ընդ հրեշտակաց 'ի յաղթական անդր յեկեղեցիս անդրանկաց 'ի վերին Երուսաղէմ. ուր և անկարելիաւ սպասեն խմանալի տեսութեան սատուածային փառաց և ընդունելութեան կատարեալ հաստատման 'ի հանդերձեալ դատաստանին՝ նորոգ ամենայնիկ և անմահ ծնանեալք. յորում՝ բաշխել ունի անաշառապէս պակ արժանաւոր, որքանութ ըստ չափու իւրեանցն առաքինական շահատակութեանց։ Ա՛ռ այս հրամանաւ պանծայ արքայն առաքեալն." Օրարուք պատերազմն պատերազմեցայ. զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի. այսուհետև կայ ինձ արդարութեան պսակն". (Բ. Տիմ. Դ. 7)։ Ահա այս ժողով երանելեացն է յերկինս որ կոչի յաղթական եկեղեցի. ուր երանելիք յաղթական պսակաւ փառաւորեալ՝

միաձայն ընդ բիւրաւոր բանակս հրեշտակաց՝ լինին փառաբանիչք սուրբ Երրորդութեան և վայելողք փառացն աստուածութեան. զայսոսիկ ամենայն յայտնի ցուցանեն բանք սրբազան առաքելոյն. "Այլ մատուցեալ էք 'ի սիոն լեառն, և 'ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ՝ յերուսաղէմ յերկինս. և 'ի բիւրաւոր բանակս հրեշտակաց. և յեկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս և առ դատաւորն ամենեցուն Աստուած, և յոգիս արդարոց կատարելոց. (Եբր. ժբ. 22): Եւ սոքա ամենեքին միայնաւոր 'ի հաւատոցն չեն ևս ընկալան զաւետիսն. Աստուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ՝ զի մի՛ առանց մեր կատարեսցին". Եբր. ժա. 39:

Երրորդ՝ կարեմք զեկեղեցին բաժանել և 'ի նիւթական. ոչ իրապէս՝ այլ յարմարութեամբ. զի չէ սա կազմեալ 'ի բարոյական մարմնոյ Քրիստոսի՝ այսինքն 'ի հաւատացելոց, այլ 'ի փայտէ 'ի քարէ և 'ի հողոյ. ոչ 'ի վերայ աստուածազգեցիկ բանից առաքելոց և մարգարէից հիմնեալ, այլ 'ի

վերայ հողոյ հաստատեալ և կառուցեալ. բայց 'ի ձեռն սրբազործ պաշտամանց և որբոց առաքելոց և մարգարէից աստուածահաճոյ բանիցն ընթերցմանց և օծութեամբ սրբարար միւռոնի, նուիրի տաճար Աստուծոյ փառաւորեալ սրբազան խորհրդոցն մատակարարութեամբ. որոյ օրինակ էր տաճարն Սողոմոնի և սուրբ սիօն վերնատունն. յորում համախումբ զումարին հաւատացեալք յաղօթս և 'ի միաբանական փառաբանութիւնս ամենակալին Աստուծոյ. 'ի յունկնդրութիւն աւետարանական կենսաւէտ բանին և քրիստոնէական ողջամիտ վարդապետութեան։ 'Ի սմա ժողովին քրիստոնեայքդ ակնկալելոյ անյապ փութալմամբ, Ջերմեռանդն հանդիսիւ սեռական զկատարումն սրբարար խորհրդոյ անմահ պատարագին երկնաւոր զատին, 'ի բարձրագոյն խորհուրդ սեղանն սրբանուէր. որով լինի փրկութիւն մեզաց կենդանեաց և ննջեցելոց։ Ուստի փոխանունարար առնեալ յանուն բնակողաց՝ զընակարանն կոչեմք եկեղեցի. բայց միայն որոշեմք նիւթական անուամբ

'ի զինուորականէն և 'ի յաղթականէն։ Ունի և այլ զանազան անուանս պանծալիս, այս նիւթական սուրբ եկեղեցի. կոչի տուն Աստուծոյ, յարկ սրբութեան, տեղի փառաքանութեան, բնակարան հրեշտակաց, քաւարան մեղաց պարտաւորելոց, և սիրաժողով խմբարան կատարեալ հաւատացելոց։ Շատ համարեալ զասացեալս ցայս վայր՝ ունկնդիցուք ասատնոր վկայութեանց։ "Տուն իմ տուն աղօթից կոչեսցի. (Մատ. իա. 13)։ 'Դախ՝ յորժամ 'ի մի վայր ժողովիցիք յեկեղեցին...։ Դու արդ՝ 'ի ժողովելն ձեզ 'ի միասին, ոչ է տուն տեառն ձեզ տեղի հաց ուտելոյ...։ Միթէ տունս ոչ ունիցիք ուտելոյ և ըմպելոյ. եթէ զեկեղեցեան Աստուծոյ արհամարհէք". ա. Կորն. ժա. 18։

ԳԼՈՒԽ Ժ

Յաղագս շնորհաց սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսի։

Զ ինուորեալ եկեղեցին Քրիստոսի՝ յաւէտ կարէ պարծիլ յաստուածային ձրիաւոր պարգևս զանազան շնորհաց, որ միշտ յաստուածային մարգասիրական բարերարութենէն ծաւալի 'ի միոյ եկեղեցւոյն իբրև զաղմանձանձ Հառապյիմս արևու։ զի նոքաւ ածի և զօրանայ եկեղեցին 'ի սքանչելի գործս զանազան և բազմատեսակ առաքինութեան։ Նոքաւ հաստատին և անշարժ մնայ 'ի կոչումն աւետարանական և 'ի Հշմարիտ հաւատս։ Նոքաւ զտանի հաղորդ երկնաւոր աստուածային և գերբնական բարեաց և փառաց։ և նոքաւ յաստուածատեսակ նմանութիւն միրամբառնայ ըստ աստուածարանին Դիոնէսիոսի։ Ասասի պարտաւորի եկեղեցին Հանաչել զձրիաւոր շնորհս Աստուծոյ, և զոհանալ զպարգևսն զերբնական ձրիցս։ որով մեծացեալ

և Հոխացեալ զառաւ յաստուածգիտութիւնս և յաստուածպաշտութիւնս կատարեալ ամենայն մասամբք։ "Գոհանամ զԱստուծոյ իմոյ յամենայն ժամ վասն ձեր՝ 'ի վերայ շնորհացն Աստուծոյ, որ տուեալ են ձեզ 'ի Քրիստոս Յիսուս. զի յամենայնի մեծացարուք դուք նովաւ՝ ամենայն բանիւ և ամենայն գիտութեամբ". ա Կորն. ա. 4։

Այս շնորհաց և աստուածային պարգևաց յայտնութիւն՝ նորոգիչ է հոգւոց, և լուսաւորիչ մտաց. հալածիչ մեղաց, և մաքրիչ խղճի մտաց. յայտնիչ ունայնութեան կենցաղոյս, և երևեցուցիչ յաւիտենական փառաց. 'ի սմա՝ քաջալերին առաքինիք անխոնջ յառաւելն փութալ 'ի յառաջադիմութիւնս երկնաբերձ առաքինութեանց. և 'ի սմա լուսաւորեալ մտօք՝ բացէ 'ի բաց մերժեն զմոլորութիւնս և զհեռլինին Հանապարհայն արդարութեան։ Սովաւ Պօղոսն՝ Պօղոս անուանեցաւ, և հալածիչն եկեղեցւոյն Քրիստոսի՝ աբանչելի քարոզիչ բանին կենաց. սովաւ քեալ թողին զհեշտութիւնս աշխարհի մաքաւորք և մեղաւորք, և խա-

շաբաթն հետևեցան Քրիստոսի. սովաւ զօրացան զունդք մարտիրոսաց հեղուլ զարիւնս իւրեանց. սովաւ գրին անուանք խոստովանողաց յերկինս 'ի զպրութեան կենաց։ Եւ յաղագս այսր պարզևաց մարգասիրական բարերարութեանցն Աստուծոյ, լուր վկայութեանցս։ "Զի շնորհք նորա էր փրկեալք 'ի ձեռն հաւատոյ. և այս ոչ 'ի ձէնջ՝ այլ Աստուծոյ պարգև է. ոչ 'ի գործոց՝ զի մի՛ ոք պարծեսցի. (Եփես. բ. 8)։ Այլ յորժամ կամեցաւ Աստուած, որոշեաց զիս յորովայնէ մօր իմոյ, և կոչեաց 'ի ձեռն շնորհաց իւրոց"։ Գաղ. ա. 15։

Պարէն ընդ վայր բարբանջել ժպրհեցան մոլորական բանիւք իւրեանց Պեղագեանք և Վիսապեղագեանք. որք զմոլորաշաւիղ կարծիս իւրեանց համարէին հաստատել՝ եթէ լոկ բնական զօրութեամբ և ոչ շնորհօք Աստուծոյ յաջողի մարդկան գալ 'ի հաւատս, և բարւոք շարժիլ կամաց յաստուածպաշտութիւնս, և յառաջանալ 'ի գործս բարութեան. որոց ընդդէմ ելեալ զօրաւոր բանիւք աւետարանական Հշմար-

աւելեան սրբազան վարդապետք եկեղեցւոյ՝ ըմբերանեալ յաղթեցին նոցա . և զմոլորութիւնս նոցին հերքեցին յեկեղեցւոյն Քրիստոսի . հաստատելով՝ եթէ անբաւական և անզօր է մարդ՝ ինքնին իւրով ուշիմութեամբ խորհիլ զաստուածային և զարարվախճան ինչ՝ առանց բաւական շնորհացն Աստուծոյ . արդեամբք իսկ ցուցանելով յայտնապէս զճշմարտութիւնս բանից աւետարանական և առաքելական վարդապետութեան . զորս ահաւասիկ և մեզ է անհանել զակաւս 'ի բազմաց առատանօր . "Առանց իմ ոչինչ կարէք առնել . (Յօհ . ժե . 5) . Իբրև ոչ եթէ անձամբ բաւական ենք խորհել ինչ իբրև 'ի մէնջ . այլ բաւականութիւն մեր յԱստուծոյ է . (Բ Կորն . գ . 5) . Երանի քեզ Սիմոն որդի Յովնանու . զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ՝ այլ Հայր իմ որ յերկինս է". Մատ . ժզ . 17 .

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս սահմանի շնորհաց։

Շնորհն համառօտիւ սահմանի ըստ աստուածաբանից՝ "Գերբնական պարգև Աստուծոյ, ձրիապէս տուեալ բանական ստեղծուածոց իւրոց, յաղագս յաւիտենական փրկութեան 'ի ձեռն արդեանցն Քրիստոսի"։

"Գերբնական" ասելով, որոշեցաւ 'ի բնական պարգևացն Աստուծոյ. որպիսի է արարչագործութիւն՝ որով հաստեալ զամենայն բնական և զչգալի բարիս իւրև պարգևս արտաքին վայելչութեան՝ շնորհեաց բանական ստեղծուածոց առ 'ի գլուս կենցաղավարութեան իւրեանց. զորս վայելեալ զոհացին զարարչէն ամենեցուն։ Այնպիսի է խնամք և պահպանութիւն, և ազգի ազգի բնական ձիրք հոգւոյ և մարմնոյ. զի միտք և կամք, աստուածային ձիրք են հոգւոյն և ներգործութիւն նորին է զգալ, մտածել,

Հանապել, յիշել, կամել, և գործել. և գե-
բաղոյն քան զայսոսիկ է ձիրն անմահու-
թեան։ Նոյնպէս և 'ի մարմնի է տեսանել
զյատուկ ձիրս, որ է ուղղաբերձ հասակին
վայելչութիւն, զգայարանացն աղնուական
ինն յարմարագրութիւն, որով զեղեցիկս
հանդիսանայ առաւել քան զամենայն կեն-
դանիս։ 'Ի սոցին սակի են և այլ ամենայն
բնական բարիք խնամոյն Աստուծոյ, որ և
ասին շնորհք միրապէս, կամ ձրի պարգևք
Աստուծոյ, որ հաստատակ է բարեաց և շար-
եաց։ Իսկ յաստուածաբանից գերբնական
շնորհք ասի առաւարար սոյն ամենայն ձրի
պարգևն Աստուծոյ, որ 'ի վերս է քան զա-
մենայն կարգս բնութեան։

"Ձրի առեալ" ասելով յայտնի լինի, զի
որպէս բնութիւնն ձրիապէս պարգևեցաւ
իւրաքանչիւր անձանց խնամօք արարչին,
ըստ այնմ. "նա արար զմեզ և ոչ մեք էաք"
(Սաղ. ղթ. 3). նոյնպէս և շնորհք նորա
է միշտ ձրի մատակարարեալ մեզ 'ի բարե-
բարութենէ նորին և ոչ արդեանց մերոց
առացուած։

"Բանական ստեղծուածոց" ասելով, յայտնի եղև եթէ ոչ ամենայն էակ է ընդունակ շնորհացս, այլ միայն բանականք՝ որոց հոգիք են անմահ, և ձգեալք զարդարեալ մտօք և կամօք. որով կարողանան ճանաչել և ընտրել զգերագոյն յարդ շնորհաց, և փափագանօք յարել 'ի նա՝ և յարդանօք զանձել զնա և պահել իրրև իսկական միջոց հասուցանող առ երանաւէտ վախճան իւրեանց, և իրրև երկնաբերձ սանդուղք յաւիտենական կենաց. որով լինի հասանել 'ի փառս երկնից արքայութեան. վասն որոյ ասացաւ "յաղագս յաւիտենական փրկութեան"։ Այս ամենայն սահման հայի առանձինն միայն առ զեղումն գերբնական շնորհացն, որ առաջնորդէ 'ի յաւիտենական փառս. առ այս վայելչաւոր բանս միայուքեանց։ "Օ՛ի արդարացեալք շնորհօքն՝ եղիցուք ժառանգաւորք յուսով կենացն յաւիտենականաց. (Տիտ. գ. 7)։ Եւ Աստուած ամենայն շնորհաց՝ որ կոչեաց զձեզ յիւր յաւիտենական փառսն, Յիսուսի Քրիստոսի". Պետ. ա Կաթու. Ե. 10։

Ապաքէն այսր գերբնական պարգևաց ձրիական շնորհաց, մերձաւոր և ընդունակ եղև եկեղեցին 'ի ձեռն բազմատեսակ արդեանց սքանչելի մարդեղութեանն Քրիստոսի. վասն որոյ 'ի սահմանն յարիցաւ, "'ի ձեռն արդեանցն Քրիստոսի". ըստ որում Քրիստոս բացարձակ և ընդհանուր զլուխ է եկեղեցւոյն, և եկեղեցին բարոյական մարմին է նորա. ապա անբաղէս հոսէ զհանրական շնորհս իբրև զլուխ յանդամս իւրվասն որոյ եկեղեցին, կամ ժողով հաւատացելոց, պարտին ճանաչել եթէ զեղմունք և լիութիւն շնորհաց են գործ և պտուղ հրաշագործ մարդեղութեան կենարարին մերոյ Յիսուսի. և նա է սկզբնական պատճառ շնորհաց և փառաց մերոյ։ "'Ի լրութենէ անտի նորա մեք ամենեքին առաք շնորհս փոխանակ շնորհաց։ Շնորհք և ճշմարտութիւն 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն. (Յօհ. ա. 16)։ Զի 'ի նմա բնակէ ամենայն լրումն աստուածութեան մարմնապէս. և էք դուք նոմա լցեալք, որ է զլուխ ամենայն իշխանութեան և պետութեան". Պաղոս. բ. 9.

ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս Քառասնեայ շնորհացն։

Շնորհքն բաժանի պարզապէս՝ նախ յարտաքին և 'ի ներքին։ Արտաքին շնորհքն է Հրեական բարեկիրթութեանն Աստուծոյ և գերբնական նախախնամութեանն գործ զարմանալի. որոյ սահմանքը բարոյապէս և արտաքուստ բացայայտ ցուցանեն զարդիւնս նորին՝ իբրև ծառ ինչ անկեալ և արմատացեալ 'ի գնացս Ջուրց, որ 'ի ժամու պտղաբերս երևեալ վայելչանայ. որպիսիք են՝ համբերողք արիաբար բազմաղան և մեծամեծ վշտաց՝ փորձութեանց՝ և հալածանաց. նպաստամատոյցք և ողորմածք առ անօգնականս կարօտեալս, նս և զոհաբանք 'ի վինճակի շքաւորութեան՝ իբրև առատութեամբ բարեաց լիացեալս։ Այսպիսի արտաքին աստուածային շնորհացն արդիւնս գործոց և առաքինութեան՝ եղոյց եկեղեցին մակեդոնացւոց, այսինքն հաւատացեալք 'ի Մակե-

գոնեիս. զորոյ բարեպաշտութեանն զգործս գովասանական բանիւ հրատարակէ սրբազան առաքեալն Պօղոս՝ շնորհս կոչելով զառաքինութիւնս նոցին, զսրատճառն փոխանակ գործոյն առեալ։ "Յուցանեմ ձեզ եղբարք զշնորհսն Աստուծոյ, որ տուեալ են եկեղեցեացն մակեդոնացւոց. զի մեծաւ հանդիսիւ նեղութեան՝ առաւելութիւն խընդութեանն նոցա, և ծանր աղքատութիւն նոցա՝ առաւել եղև 'ի մեծութիւն առատութեան նոցա". բ Կորն. ը. 1։

Բարեաքին շնորհ ասատուածային և սրանչելի մարդասիրութեանն յայտնեցաւ ազգի մարդկան, մարդեղութեամբ կենարարին մերոյ Յիսուսի. արդարև շնորհ մեծ պարգևեցաւ յայս յանդիման աշխարհի 'ի ծնանելն 'ի սուրբ կուսէն, 'ի կոչին որդի մարդոյ, և զառն Աստուծոյ բարձոյ մեզաց աշխարհի. 'ի սքանչելի հրաշագործութիւնս և 'ի կենսատու վարդապետութիւնս. 'ի կամաւոր չարչարանսն և 'ի փրկարար խաչելութիւնն. յամենազօր յարութիւնն, և 'ի մեծահանդէս ինքնիշխան համբարձումն. 'Ի

լիութեանց այսր արտաքին շնորհաշնութեան Հիսուսի փրկչին մերոյ՝ յաջողեցաւ և մեզ վերածիլ 'ի մահուանէ 'ի կեանս, 'ի վիճակէ դատապարտութեան՝ 'ի վիճակ փրկութեան. յանարգութենէ մեզաց՝ 'ի ժառանգութիւն աստուածային փառաց։ Այս ցուցանեն յայտնի բանքս վկայութեանց՝ "Եւ բանն մարմին եղև՝ և բնակեցաւ 'ի մեզ. և տեսաք զփառս նորա՝ զփառս իբրև զմիածնի առ 'ի հօրէ՝ լի շնորհօք և ճշմարտութեամբ. (Յօհ. ա. 14)։ Քանզի երևեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան". Տիտոս. բ. 11։

"Անբրին շնորհքն է ձիրք աստուածային գերբնական պարգևաց՝ շարժիչ և զօրացուցիչ կամաց և յօժարութեան 'ի ներքուստ, որով յաջողի գործն յարդարութիւն և յուղղութիւն, և խափանին արգելք բարեվախճան գիտաւորութեանց. որով ամենայն ոք սեպհականէ արդեամբ զփրկութիւն հոգւոյ և զփառս երկնից։ Եւ ահա այս անապատելի զօրութիւն՝ էր պարգև սրբոյ Հոգւոյն Աստուծոյ. զոր խոստանայր Քրիս-

ուս առաքելոց իւրոց 'ի բարձանց անտի հեղուլ 'ի նոսա՝ առ 'ի կացուցանել զնոսա անվանելի յամենայն հակառակութեանց և 'ի թշնամեաց։ "Եւ ահա ես առաքեմ զաւետիս հօր իմոյ 'ի ձեզ, և դուք նստարուք յԵրուսաղէմ մինչև զգենուցուք զզօրութիւն 'ի բարձանց։ (Ղուկ. իդ. 48)։ Յամենայնի կարող եմ, այնու՝ որ զօրացոյցն զիս"։ Փիլիպ. դ. 13։

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս քաջանման ներքին շնորհաց։

«Երբին շնորհն բաժանի 'ի ներգործական, 'ի արքարար, 'ի ձրիաւոր և 'ի գործարիր։

"Ներգործական" շնորհն է՝ զոյս իմն զերբնական ծագեալ յաստուածային անսահմանն բարութենէ անտի, և ներգործեալ 'ի հոգիս. սա է սիրտս շարժել զերբնական ունակութեամբ զընդունողս 'ի Հաղորդութեան Հշմարտութեան, որով անխափան գիտէ յաստուածարանական առաքինութիւնս, այսինքն 'ի յուղղափառ Հաւատս քրիստոնէութեան, յաներկիւղելի յոյս խոստացեալ երկնաւոր բարեաց և 'ի կատարեալ սէրն՝ 'ի նուիրելին առ Աստուած և առ ընկերն. առ Աստուած՝ իբրև առ ծայրագոյն բարին. և առ ընկերն՝ իբրև առ պատկերակիցս Աստուծոյ։

Այսու ներգործական շնորհիւ գիւրըմ-

քրոնելի լինին մտաց , ամենայն գերբնա-
կան ուսմունք . սակաւ յաջողի ինքնայօժար
բերել կամաց յանձնառութիւն ծառայութիւն
աստուածային անմխաթելի հրամանաց . առ
որ վերածին այսորիկ բանք վկայութեանց ։
"Գրեալ է 'ի մարգարէս , և եղիցին ամ-
ենեքեան ուսեալք Աստուծոյ . ամենայն որ
լսէ 'ի հօրէ և ուսանի , գայ առ իս . (Յօհ .
ՁԼ . 45) ։ Իսկ միմիմարիչն Հոգին սուրբ ,
զոր առաքեսցէ Հայր յանուն իմ , նա ու-
սուցցէ ձեզ զամենայն . և յիշեցուցցէ զա-
մենայն՝ զոր ինչ ասացի ձեզ . (Յօհ .
ԺԳ . 26) ։ Կին ոմն անուն Լիդիա ծի-
բանավաճառ՝ 'ի Թիւատիր քաղաքէ՝ երկիր-
ղած Աստուծոյ՝ լուաւ . զորոյ Տէր իսկ
երաց զսիրտ անսալ խօսիցն Պօղոսի" .
Գործ . ԺԳ . 14 ։

"Արբարար" շնորհն է՝ գերբնական ընդու-
նակութիւն հեղեալ և ծաւալեալ 'ի հոգիս
հաւատացելոց՝ և մերձաւորելոց 'ի արբարար
և արդարացուցիչ խորհուրդս ապաշխարու-
թեան , և հաղորդութեամբ մարմնոյ և ա-
րեան կենարարին մերոյ Յիսուսի . որով լինի

Հոգեղէն բնութեանս հաղորդիլ աստուա-
ծեղէն անեղ և ամենակատար բնութեանն։
Ընդ սրբոյդ հեղումն շնորհաց 'ի մար-
գասիրական զթութենէն Աստուծոյ առ հո-
գիս մեր, կացուցանէ զմեզ ժառանգս յա-
միտենական երանութեան, և ժառանգա-
կիցս Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ.
առ այս յորմարին բանքս։ "Հայր՝ զորս
եառուր ինձ, կամիմ՝ զի ուր եմն եմ, և
նոքա իցեն ընդ իս։ զի տեսանիցեն զփառս
իմ զոր եառուր ցիս։ (Յօհ. ժէ. 24).
Իսկ եթէ ընդ լոյս գնայցեալք՝ որպէս և նա
'ի լոյս է, հաղորդութիւն ունիցք ընդ մի-
մեանս։ և արիւնն Յիսուսի որդւոյ նորա
սրբէ զմեզ յամենայն մեղաց։ (Յօհ. ա
Կաթ. ա. 7)։ Ոչ փրկեացն զմեզ, և
կոչեաց զմեզ 'ի կոչումն սուրբ։ ոչ ըստ
գործոց մերոց՝ այլ ըստ իւրում յառաջ-
դրութեանն և շնորհաց՝ որ տուաւ մեզ 'ի
Քրիստոս Յիսուս յառաջ քան զժամանակսն
յաւիտենից"։ Բ Տիմոթ. ա. 9։

"Զրիստոս" շնորհքն է պարգև զերբնա-
ւոր առեալ յԱստուծոյ յամենախնամ

բարեգթութենէն, առ 'ի տնօրինել նոքա զփրկութիւն այլոց. վասն որոյ 'ի ձեռն առացողի ձրիաւոր շնորհացս՝ տիրապէս յաջողի բազմաշահ օգուտ հոգևոր բարեաց և առաքինութեանց բազմաց ունկնդրաց և հեռևողաց ողջամիտ վարդապետութեանց հոգևոր և բարոյական խրատուց շնորհաբաշխելոցն։ Զոր յոլովք 'ի պարգևաց շնորհեցան յաւէտ առաքելոց և առաքելաշնորհ վարդապետաց և աստուածազան արանց արքոց, հոգևոր հոգւոյց և բարեջան աւուցչաց. և այս ձրիաւոր շնորհ ունի զգանազան բաժանմունս որոշելոյ պաշտամանց առացողաց նորին, որպէս զծառ ինչ բազմաճիւղ ուռճացեալ և պտղաբաշխեալ. զոր յայտնի ցուցանէ արքազան առաքեալն. "Մէկէա և բաժինք շնորհաց են, այլ հոգի նոյն է. եթէ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն է. եթէ բաժինք յաջողութեանց են, այլ Աստուած նոյն է. որ յաջողէ զամենայն յամենայնի. բայց իւրաքանչիւր ումք տաւեալ է յայտնութիւն հոգւոյն՝ առ իւրաքանչիւր օգուտ" եւ. ա Կորն. ժբ. 4։

Ի միոյ հոգւոյ զնզանի այս յոգնաան-
սակ ձրիապարգև շնորհ. ըստ արժանաւո-
րութեան և զօրութեան առողին՝ վասն հա-
սարակաց օգտի և ի պայծառութիւն ե-
կեղեցւոյ. յաղագս որոյ խրատանիւր ըն-
դունողք ի շնորհացս՝ իբրև զհաւատարիմ
հաղարապետս և բարւոք պաշտօնեայս զա-
նազան շնորհացն Աստուծոյ, պարտին մա-
տակարարել զնոյն ի փառս Աստուծոյ և ի
շահ ընկերին. զի այն է կամք մարդասէր
արարչին։ Ուստի արքայն առաքեալն
Պետրոս բացայայտ յորդորէ զամենայն
շնորհընկալս, չգլանալ զնոյն յեղբարց իւրոց
այլ անանխանձ նաւիրել կարօտելոյ, որպէս
և պահանջէ ուղիղ կանոն եղբայրութե-
թեան և մարդասիրութեան։ "Խրատանե-
ցիւր որ որպէս և ընկալաւ շնորհս ինչ,
զնոյն մատակարարել իբրև զբարւոք հա-
զարապետս պէսպէս շնորհացն Աստու-
ծոյ". ա Կոր. Պետ. գ. 10։

"Գործադիր" շնորհն է՝ օժանդակիչ և
զօրացուցիչ ակարացոյն և վարդապետ բնու-
թեան մերում՝ առ անդամեղաղ և անխորշ

հեռեալ բարեսիրութեան, և 'ի բաց մերժել զչարութիւն. կոչի սա և շնորհք հաճոյարար. ըստ որում զստացողին շարժէ զկամս 'ի բարին, և ուղղէ զվարս և առնէ առատաձեռնաճաճոյս։ Սա տայ մտաց խորհիլ զհաճոյս Աստուծոյ և փութացուցանէ արիանալ 'ի պէտսպէս առաքինութիւնս և գործով յայտնել զյարգ նորին։ Սա է իբր անդեղայ թռունից մեղաց. սա՝ որպէս փող աւազապող զարթուցիչ է խղճի մտաց որոշել զբարին 'ի չարէն, զՀշմարտութիւնն 'ի սուտենէ. և յարդարէ զընդունօղն լինել Հշմարտասէր և բարեգործ. սակաւ գանձին 'ի հոգին ամենայն սեւակք առաքինական և բարոյական փարթամութեանց։ "Ոչ կարէ մարդ առնել յանձնէ և ոչ ինչ, եթէ ոչ իցէ տուեալ նմա յերկնից 'ի վերուստ. (Յօհ. ի. 27)։ Օր որք մարմնաւոր են, Աստուծոյ հաճոյ լինել ոչ կարեն. բայց զուք ոչ էք մարմնով՝ այլ հոգւով, եթէ իցէ Հոգին Աստուծոյ 'ի ձեզ բնակեալ". Հռոմ. ը. 8.

Հայեաց յերկինս. կարեա՞ թռուել արդ

գեաք զաստեղս . նոյնպէս և զԱստուծոյ
շնորհայն տեսակս . ոչ միայն ամենայն բոլոր-
մասնական շնորհքն Աստուծոյ կարողանամք
գործել զարմին և հասանիլ ՝ի կեանս և
՝ի փառս յաւիտենական երանութեան ։

ԳԼԽԻ ԺԲ

Յաղագս զգուշանալոյ 'ի շնորհս Աստուծոյ։

Աստուած մարդասէր և ամենաբարին կամի, զի ամենայն մարդիկ կեցցին 'ի յաւիտենական կեանս, և կացցին հաստատուն 'ի գիտութիւն ճշմարտութեան. և լիցին հաղորդ և ժառանգ բարութեան և փառաւորութեան իւրում. ուստի ոչ յումեքէ զանազ զշնորհս իւր, և ոչ երբէք պակասի 'ի զարգացեալոյ զնոցն։ Բայց բազում անգամ մարդիկ զպակասին յաստուածային և ձրիական շնորհացն անտի. զնեղով արդեալս զանհոգութիւն և զչարութիւն կամաց հակառակ աստուածային անչափ և ամենաբաւական առատաձեռնութեանն։ Երևելի է գործ՝ յուսաւոր առնել զամենեսին. իսկ որ փոքրիկ զգաստանան ընդգէմ լուսոյ նորին, հարկաւ զրկի յաշխարհածաւալ լուսատուին Հաստատչութենէ նորին։ Այս ոչ ինչ կարող է զրկել զմեզ յաստուածային

գանազան շնորհաց , բայց եթէ թիւր և մոլար գնացք մեր և շարախառնեալ վարք ։

Աստուած անհասանելիս աղօթիւր է բազմազեղ շնորհաց , զկարօտեալսն կոչէ առ ինքն ասելով ։ "Եթէ ոք ծարաւի իցէ եկեսցէ առ իս և արբցէ" ։ (Յօհ ։ Է ։ 37)։ Ապա պարտ է մեզ առանց ծուլութեան և պղերգութեան մատչել առ աղօթիւրն շնորհաց , և ընդունել անտի զոպարկեան զոյն ձրիաւոր և կարևոր փրկութեան մերոյ ։ Ընդունակ է աստուածային շնորհաց սիրտ լիացեալ աշխարհային սիրով և երկրաւոր ցանկութեամբ , իբրև անօթի ինչ զեղուն՝ յորում չէ հնար ընալ այլ ևս զանազակ ինչ ըմպելի պատուական ։ Ապա հնչ յանօթոյ արտէ քումն զանատի հեշտութիւնս աշխարհասիրութեան , զի ընկալցիս զ լիութիւնս շնորհաց , և լիցի սիրտ քո անօթ ընտիր և ընդունարան պիտանի երկնաւոր բարեաց ։ Յօժարափոյթ և պատրաստ է ծայրագոյն բարութիւնն Աստուծոյ առատաձեռնել մեզ զկարևոր բարիս մեր և լիացուցանել արտաքին և ներքին պարգևօք ։

բոյց խնդրէ 'ի Ինձ միայն զհեռանութիւն կամաց մերոց 'ի բարին , 'ի բաց մերժել զընդունայն սփոփանս աշխարհի , և զչար խորհուրդս 'ի մտաց, անբռնադատ անձիշխանական կարողութեամբ մերով . զի ըստ Միրաքայ՝ (ԺԷ . 6 .) Ընտրուած , որ ըստ սեղծ գմեզ՝ ելից զսիրտ մեր զգօնութեամբ . և 'ի ձեռս անձնիշխան զօրութեան մերում յանձնեսցէ ընտրել ազատ կամօք զբարին 'ի չարէն . զլոյսն 'ի խաւարէն այլոմքն հանգերձ ։ Թողում ասել զբնական օրինաց , որ ներքին ազդեցութեամբն վարդապետէ յօժարութեամբ սրտի քո՝ վկայութեամբ մտաց քոց (Հռով . Բ . 15) . ընտրել զլաւն 'ի վատթարէն և զուղիղ ճանապարհն փրկութեան 'ի մոլար դնացից կորստեան . և խրատէ , զի զոր ոչ կամիս դու՝ եթէ այլք արասցեն քեզ , և դու մի՛ զնոյն յօժարեսցիս առնել այլոց ։ Եթէ ճանաչես զպատիւ և զանարգանս քո , չյօժարիս անարգիլ , և խնդրես զպատիւ քո . ապա կարես ընտրել զբարին և առնել զչարն . հեռանալ 'ի մոլութենանց՝ և փարիլ զառա-

քինութեամբ. որով լինիս պատրաստեալ առ ընդունելութիւն աստուածային ձրիապարգև շնորհաց։

Յասացելոցս ասել կամիմ հեռևեցուցանել, եթէ ամենաբարի բնութիւնն կամի առատաձեռնել 'ի քեզ զպէսպէս բարիս երկնաձիր շնորհաց իւրոց. բայց կամի՝ զի և դու ազատ կամաք քովք ընթացակից լիցիս մարդասէր և բարերար կամաց իւրոց։ Ընդ այս օրինակաւ յորդորէ զմեզ լուսաւոր մեկնիչն մարգարէութեան Եսայեայ, Գէորգ շնորհապերճ վարդապետն մեր, 'ի մեկնութեան անդ յասելն. "Զոր օրինակ չէ հնար լուսոյ լուսաւորել զաչս, եթէ ոչ նախ աչքն առողջ իցեն, նոյնպէս և Աստուծոյ խնամքն ոչ ճանաչի մեզ. եթէ ոչ միտքն 'ի ներքս առողջ իցեն մեզ"։ Այսպէս՝ լիցի քեզ յեռամտութեամբ զաշխարհայնովքս զբաղիլ, և մնասի պատճառանօք ծուլանալ յառաքինական գործոց, և պակասիլ 'ի բարի դիտաւորութեանց և յաստուածահաճոյ առաջարկութեանց։ Դարձիր զվայրկեանն, ծանիր և զյաւիտեան-

կանն. ասացիր զփոյթ և զքան առ հոգ-
ւոյդ փրկութիւն. հեռացիր 'ի խաբեպիկ
հրճուանաց աղցաւոր և մեռոյ կենդանոյս։
Դառնացին քեզ մարմնական հեշտու-
թիւնք, և քաղցրացին հոգևորական խոր-
հրդածութիւնք. և յայնժամ ուղխորէն
հասեցին 'ի հոգիդ յառատաբուղխ աղբե-
րէն կենաց՝ յորդութիւնք շնորհաց. յորմէ
բողբոջին բեղմնաւոր ոստք առաքինութեանց
ընծայել զհոգևորական պտուղս անմահ-
կենդանութեան։ Համարձակեա՛ց՝ վասն հ
լեր 'ի քո բարեսրտութիւն և յառաքինա-
կոր յօժարութիւն. և մի՛ երկրայիր անշուշտ
ստանալ զշնորհս փրկութեան և երանու-
թեան յանսահման մեծութենէն Աստուծոյ։

Զգոյշ լեր շմեալ յետս՝ յառաստաձեռն
բարերարութեանց անտի Աստուծոյ. զգոյշ
լեր շարդելով և շմերժել 'ի քէն զերկնաձիր
զանապատելի և զհոգեշահ պանծուցն զստա-
ցումն, անհոգութեամբ քով և կամապաշ-
տութեամբ. զրեա զայս ասասուածարանա-
կան առած 'ի միտս քո, եթէ "Որ յոշէիցս
արար զքեզ առանց քեզ՝ ոչ փրկեսցէ արդ

և զքեզ առանց քեզ։» Արդիւնաւորի անձն և ընդունի զայս երկնային պարգև ձրիա-կան, եթէ ունիցի զբարի կամս ընթացա-կից անդանդաղ հեռևող այնր շնորհաց։ Յօրինակաց ասասի սրբազան գրոց յայտնի լինին ասացուածք մեր։ Կամեցաւ Աստուած ապրեցուցանել զԼոտ հանդերձ ընտանեօք իւրովք 'ի համաշխարհական ջրհեղեղէն։ բայց հրամայէ նմա ձեռօք իւրովք աշխատ լինել 'ի մեծադործ շինուած տապանին 'ի փրկութիւն անձին իւրում։ (Ծնն։ զ։ 14։) Կամի սրբել զԼեմանն 'ի սասակիկ բորոտութենէն 'ի ձեռն մարդարէին Յորդանէի։ բայց հրամայէ, զի և նա երթիցէ և լուացցէ 'ի Յորդանան եօթն անդամ։ (գ Թագ։ Ե։ 10)։ Ամենափրկիչն Յիսուս մարդասիրական և բարեխնամ կամօք յօժարեցաւ բանալ զաչս 'ի ծնէ կուրին։ բայց հրամայէ, զի և ինքն երթիցէ և լուացցէ զաչս իւր յաւազանին Սելոամայ, առ 'ի աշխատ լինել և նմա առ լուսաւորութիւն աչաց իւրոց։ Յօհ։ թ։ 7։

Արժան է՝ և հարկ 'ի վերայ կայ ամ-

նայն փափաքողաց աստուածային շնորհ. հաց, Ճանաչել՝ եթէ ի՞նչ իւիք և կամ որո՞ւմ միջոցաւ կարէ հեռանիլ շնորհացն, և ապահովիլ 'ի միտս, եթէ արժանի է և ընդունակ երկնագեղ պարգևացն. վասն որոյ շնորհատենչ անձանց պարտ է զգուշութեամբ սնապհականել յանձին զայսոսիկ աստուածահաճոյ բարեկրթութեան զհոգևոր ունակութիւնս. այսինքն զսէր եռանդնոտ ունիլ առ Աստուած 'ի բոլոր սրտէ և յամենայն մտաց՝ հանդերձ պատուիրանապահութեամբ. (Յոհ. ժդ. 23)։ Նոյնպէս արդիւնաւոր և Ճշմարիտ եղբայրսիրութեամբ զհետ լինել անմախանձ բարեաց 'ի շահ եղբօրն և ընկերին. (Յոհ. ժե. 17)։ Հոգեսիրութեամբ չհաճիլ ընդ անցաւոր և ունայն հեշտութիւնս աշխարհիս. և փութով ապաշխարութեան 'ի բաց վանել զբընութիւնս մեղաց, և հեզութեամբ սրտի և բարեպաշտիկ դիտաւորութեամբ մտաց՝ խորհիլ, տենչալ և փափաքիլ աստուածային շնորհաց և փառաց։ Հռով. ը. 17։

Պարտ է ուրեմն արթուն մտաք յայտ-

սիկ յառաքինութիւնս անդրդուելի հաստատել, անյապ փափաքանօք յարիլ 'ի սոսա։ և սրտաբորբոք վառիլ 'ի սէր սոցին։ որոմք լինի ստացումն ընդունակութեան շնորհաց։ և ընդունակութեամբն յաջողի լինանալ երկնահոսան բարեօք և ձրիական պարգևօք աստուածային առատաձեռնութեանն։ և լիութեամբն յաճախին առաքինութիւնք զարմանալիք։ և մեծամեծ գործովք առաքինական բարեմասնութեան՝ լինի շնաշխարհիկ և երջանիկ յայսմ աշխարհի։ և երջանիկ կենդանութեամբն փառաւորի հոգին 'ի վիճակ փրկութեան, ազատ 'ի վշտաց խղճի մտացն։ և վիճակաւն փրկութեան՝ փոխի զկնի մահուանն ուրախ սրտիւ և բերկրեալ հոգւով յերանաւէտ կեանս յաւիտենական փառաց։ և երանաւէտ կենաց զմայլի և վայելէ զառաւուածային անեղծ և անթառամ փառացն զժառանգաւորութիւն, և զամենայնանկալի և զանճառելի փառաւորութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յաւիտեանս յաւիտենից։

Զ՝ արիք ապա ըստ յորդորանաց առաքելոյն փոյթ և ջան ունել սրտի մտօք ՝ի խորհուրդս , ՝ի բանս և ՝ի գործս մեր ։ Խորհեսցո՛ւք զաստուածայնոցն . խօսեսցուք զբանս շահաւորս և օգտաւէտս ընկերի մերում , և պայծառացուցիչս հոգւոց մերոց ։ Խառնեսցո՛ւք ՝ի շար և ՝ի մոլար գործոց և վարուց , և հեռանեսցո՛ւք առաքինական և բարեպաշտ արդեանց ։ Զ՝ի մի երբէք յեռանեալ և պակասեալ լինլուք յերկնածաւալ շնորհաց անտի . և վասն հեղգութեան , և յեռամիտս կամաց մերոց՝ ընդունայն և վայրապար եղիցին ՝ի մեզ աստուածային անբաւ բարերարութեանն պարգևք անկշռելիք՝ և շնորհք անչափելիք . զոր նա ինքն ծայրագոյն բարութիւնն առատաձեռնէ առ մեզ ձրիարար , իբրև միջնորդ իսկական մերոյս փրկութեան ։ "Զգոյշ լերուք զուցէ ոք յետնեալ գտանիցի ՝ի շնորհացն . (Նբր . ժբ . 15) ։ Գործակից եմ ձեզ և աղաչեմ , մի՛ ընդունայն զշնորհսն Աստուծոյ ընդունիլ ձեզ" . Բ Կորն . զ . 1 ։

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղագս պանծալի Նշանաց Եկեղեցւոյն Քրիստոսի։

Հշմարտութիւն եկեղեցւոյն Քրիստոսի յայտնի երևի. և իրաւամբ ասի Եկեղեցի քրիստոսական, որ ունիցի զայս չորեսին գլխաւոր նշանս գերազանց կատարելութեան։ Օրս ցուցանեմք ասատանօր ըստ ճիշտ և բաւական ազգեցութեան արքազան և եկեղեցական գրոց և ուղղափառ դաւանութեան մերում՝, որք են այսոքիկ. միութիւն, սրբութիւն, ընդհանրականութիւն, և առաքելականութիւն. զոսկէս միանգամայն առեալ՝ և խորհրդով գրեալ՝ ընթեռնուցք 'ի ժամագիրս մեր. "Ոչ սան միայնոյ սուրբ կաթուղիկէ և առաքելական եկեղեցւոյ"։ Այսպէս՝ եկեղեցին Քրիստոսի ունի զառաջին զայս նշան միութեան. զի զանազան պատճառօք և խորհրդաւոր վայելչութեամբ. է մի 'ի Քրիստ-

տոս Յիսուս . իբրև զմի բանաւոր հօտ խնամեալ և պաշտպանեալ 'ի միոյ քաջագոյն և ամենակարող հովուէ անտի Յիսուսէ , որ եդ զանձն իւր 'ի վերայ ոչխարաց իւրոց ։

Եւ էպէտ եկեղեցին Քրիստոսի՝ այսինքն բազմութիւն հաւատացելոց , տարածեալ և սփռեալ երևին ընդ ոլորտս տիեզերաց և 'ի զանազան ազգս և 'ի բազմատեսակ լեզուս որոշեալ . բայց ունին զմիութիւն 'ի Քրիստոս Յիսուս . զի եկեղեցին մի մարմին է խորհրդական , 'ի պէսպէս անդամոց ուղղափառ հաւատացելոց՝ 'ի միաձիւնեալ գլուխն Քրիստոս յօդակապեալ . "Լուս ձայնի իմում լուիցեն . և եղիցին մի հօտ և մի հովիւ . (Յօհ . Ժ . 16) ։ Որպէս մարմին մի է , և անդամս բազումս ունի , և ամենայն բազում անդամք մարմնոյն՝ մի մարմին են , նոյնպէս և Քրիստոս ։ Ա՛ՀԼ դուք մարմին Քրիստոսի էք , և անդամք յանդամոց նորա" . Ա՛ Կորն . ԺԲ . 12 և 27 ։

Եկեղեցին Քրիստոսի ունի զմիութիւն ա-

մենաղոմելի՝ 'ի հոգևոր և աստուածահրաշ ծնունդն միրուութեան , յորում ազգաւ և լեզուաւ և տեղեաւ հեռաւորք 'ի միմեանց՝ միանան հոգւով 'ի մի շնորհաւորեան նմանակերպութիւնս Քրիստոսի , և 'ի մի Հշմարիտ հաւատս աւետարանական վարդապետութեան , և 'ի միոյ կենդանարարուն աղբերէ սուրբ Հոգւոյն ընդունին զանմահարար զեղմունս շնորհաց . ամենեքին միակերպ զբին յորդեղրութիւն և 'ի ժառանգութիւն միոյ միոյնոյ հօրն Աստուծոյ երկնաւորի , և միանգամայն հրաւիրեալ գասնին 'ի մի յոյս երկնային բարեաց և յաւիտենական կենաց անմահութեան ։

Աստուծոյ խորհրդական յարմարութեամբ լրացեալ երևի աստուածազգեցիկ մարգարէական տեսութիւն Յրեմիայ (լբ . 39)։ Ահա եկեսցեն՝ զանազան ազգաց հաւատացելոց , է "սիրտ այլ" , բազմատեսակ ազգային ծիսիւ , արարողութեամբ և սովորութեամբ յիւրեանս . իսկ ամենեցուն է "Հանապարհ մի" , 'ի մի Հշմարիտ հաւատս ազգատիրաց գաւանութեան՝ և 'ի մի ճնր-

գործութիւն արարար և կենդանարար խոր-
հրդոց քրիստոսաւանդից . որ առաջնորդէ
ամենեցուն միակերպ առ յաւիտեանս ե-
բանութիւնս աստուածային փառաց . որպէս
այս ամենայն վկայութիւնք յայտնի ցուցա-
նեն : "Ոչ մի վասն նոցա միայն աղաչեմ,
այլ և վասն ամենայն հաւատացելոց բա-
նիւն նոցա յիս . զի ամենքին մի իցեն .
որպէս դու Հայր յիս՝ և ես՝ ի քեզ . զի և նո-
քա՝ ի մեզ իցեն . (Յօհ . ԺԷ . 20) :
Որք միանգամ՝ ի Քրիստոս մկրտեցայք ,
զՔրիստոս զգեցեալ էք . չէք խոիր ,
ո՛չ հրէի՝ և ո՛չ հեթանոսի . ո՛չ ծառայի՝
և ո՛չ ազատի . ո՛չ արուի՝ և ո՛չ իգի . զի
ամենեքին դուք մի էք՝ ի Քրիստոս Յի-
սուս . (Գաղ . Գ . 27) : Մի մարմին և
մի հոգի . որպէս և կոչեցարուք՝ ի մի յոյս
կոչման ձերոյ : Մի է Տէր . մի հաւատք .
մի մկրտութիւն ". Եփես . Դ . 4 , 5 :

Բայց զմիութիւնն միարանական սիրոյ
եկեղեցւոյն՝ թողում խմաստասիրել հոգե-
զգօն բանասէրաց . որ առաւել քան զմագ-
նիսական զգուշիւն զայլ և այլ տարօրէն

անդամս եկեղեցւոյ առ ինքն հաւատքեալ
իբրև զմի անձն և զմի հոգի մի մարմին կազմէ
և 'ի մի գլուխն Քրիստոս միաւորէ ։ Զրանչ՝
յարդարոյց զայս սէր միաբանութեան ։
երանի՝ յոժարելոց ընկալեր զայս բաժակ ա-
ստուգակ ։ որոյ մատաւակօրն է սէր անուն
Յիսուս ։ Զրանչ այսու միաբանեալսն սի-
րոյ անանցեալս հաստատելոյ 'ի խորհրդա-
կան և 'ի Ճշմարիտ որմն Յիսուս ։ իբրև
բարուանակ կենդանի ։ որում հաղորդեալ
ասասուածային զօրութեան նորին բնդմա-
սոր պարգևք զանազան առաքինութեանց
բարգաւաճին ։ (Յօհ ։ ԺԵ ։ 5) ։ Որ թա-
գաւորէ այս սէր քրիստոնէութիւն՝ անդ
ո՛չ զոյ նախանձ ։ ո՛չ խնդիր առանձին
հաւքաւոյ և գոսրութեան ։ ո՛չ մեծա-
մտութիւն և ո՛չ հպարտութիւն ։ ո՛չ ան-
պատկան յանդգնութիւն և ո՛չ ինքնահա-
ճութիւն ։ այլ միայն ցանկալի յոժարութիւն
ընդ բարին ընդելութիւն ։ և խոստութիւն
ընդ ամենեսին ։ Զանգանոր փարի հնգա-
թիւն և խոնարհութիւն արտի ։ անդ սիրոյ
գթութիւն և խնամածութիւն առ կարո-

տաւորս . անտի տեղի տայ անդարձ խու-
սափմամբ անիրաւութիւն և տուութիւն , և
թագաւորէ արդարութիւն և ճշմարտու-
թիւն . Այլ զի՞ է ինձ երկարել զբանիւքս՝
զհաւատն ասացեալ . միաբանական այս սէր
եկեղեցւոյ՝ ո՛չ եմք միայն զերծուցեալ 'ի
մահուանէ՝ 'ի յաւիտենական երանաւէտ
կեանս վերածէ զմեզ , և ազատ 'ի խաւա-
րէ մեղաց՝ 'ի զերարդի լոյս շնորհաց և
արքայութեան տոքերէ , այլ և ծայրագոյն
բարութեան առնէ զմեզ հաղորդ . ընդ
Աստուծոյ միաւորէ , և առ Աստուած
բարձրացուցանէ . Տես զայս ամենայն և
ընթերցիր մտաւութեամբ 'ի ա Կորն . ժգ .
4 . մինչև 'ի 6 համարն . և 'ի ա Կաթո-
ղիկ . ՅԳ . 14 . և ՅԴ 16 .

Այսու միութեան սիրոյ քրիստոսապրոշմ
նշանաւ՝ եկեղեցին Քրիստոսի Ճանաչի .
այսու ամենայն ուղղափառ հաւատացեալք
միանան 'ի սիրա և 'ի հոգի , ո՛չ հեռա-
ւորութիւն տեղեաց և ո՛չ ազգաց պէսպի-
տութիւնք կարեն անջատել զնոսա 'ի մի-
մեանց , զորով նոցա կարդալք հզօրագոյն

զօրութեամբ այսր նշանի միութեան . և առ-
աքուածահանոյ ամենաքաղցր և պատուական
պատուոյ քաղին յոյսմ երկնուղէշ ծառայ
միաբանական սիրոյն , զոր անկեալ ամենա-
հնար ձեռն ատուածային 'ի մէջ գրախտի
իւրում սուրբ եկեղեցւոյ . և կամի հաս-
տատուն արմատանալ սորին , և քաղցրա-
նալ 'ի պտուղսն ։ "Օ՛ի զուք երթայցէք՝ և
պտղաբերք լինիցիք . և պտուղն ձեր կաց-
ցէ ։ Օ՛այս պատուիրեմ զի սիրեսջիք զմի-
մեանս . (Յօհ . ԺԵ . 16 . 17 ։ Օ՛ի սէրն զոր
սիրեցեր զիս՝ 'ի նոսա իցէ , և ես 'ի նոսա ։
(Յօհ . ԺԷ . 26) ։ Նա բազմութեան հաւա-
տացելոյն էր սիրտ և անձն մի". Գործ ։
Դ . 32 ։

Նկնդեցին Քրիստոսի ունի և զերկրորդ
նշան կատարելութեան՝ "զսրբութիւնն" . և
այս 'ի բազում պատճառաց ցուցանի . յորոց
զ գլխաւոր առնալ և մեք զիցուք առա-
նօր ։ "Նախ 'ի սրբութենէն Քրիստոսի , որ
է գլուխ եկեղեցւոյ՝ ըստ առաքելոյն . և է
սուրբ բնութեամբ և էութեամբ , և բոլո-
րովին սրբութիւն . և այսր ամենամարդու

սրբութեան զառաւ հաղորդեալ եկեղեցին՝ այսինքն հաւատացեալք. իբրև բարոյական մարմին միացեալ ընդ սրբազնաւորը զԵ-խոյ իբրոյ Յիսուսի Քրիստոսի։ Ապա եթէ որ յանդգնութեան եկեղեցւոյ մեայ անբաժան ի սրբարար և ի Հշմարիտ գլխոյ իւրմէ ի Քրիստոսէ Յիսուսէ, ուղղափառ դաւանութեամբ քրիստոնէական Հշմարիտ և սուրբ հաւատոյ, ո՛չ երբէք զահաւիժելով ի շարաչար մերձութիւնս հերետիկոսութեան և սոսկալի ուրացութեան, անշուշտ հաղորդաբար ունի զանախտ և զանապական սրբութիւնն Քրիստոսի, ըստ հաստատուն վկայութեանցս։ "Որ ծանանելոյն է ի քէն սուրբ է. (Ղուկ. ա. 35։) Նա զոք սուրբ էր, այլ ո՛չ ամենեքին. (Յովհ. ժգ. 1։)։ Եւ զոք ազգ էր ընտիր, թագաւորութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական. (ա Պետր. Գլխ. բ. 9)։ Եկեղեցւոյդ Աստուծոյ՝ որ է ի Պորնիոս՝ նոսրերոց ի Քրիստոս Յիսուս, կոչելոց սրբոց՝ ամենեքումբք հանդերձ, որ կարգան զանուն

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յամենայն տեղիս նոցա և մեր". (ա Կորն. ա 2).

Երկրորդ՝ եկեղեցին ունի զարբութիւն արքարար Հշմարիտ Հաւատոյ՝ ընդունելով ներքսապէս զաստուածային աւետարանական բանս, ուղղափառ մտաւք և ողջամիտ խորհրդով, որ զմիտս ուղղին 'ի ճանաչումն Հշմարտութեան. և առաքելոցն կամայ յօժարիլ 'ի գործս բարութեան. և արքեալ զսիրտս և զհոգի յանմարուր խղճէ և 'ի չար խորհրդոյ՝ տաճար սուրբ պատրաստեն 'ի բնակութիւն աստուածային մեծութեան. ըստ որում՝ բանք Տեառն են բանք սուրբ. այսինքն յաւէտ արքարար ամենայնի։ "Սուրբ արա զնոսա Հշմարտութեամբքով, զի քո բանդ Հշմարտութիւն է. (Յօհ. ժէ. 17)։ Զոր արդէն իսկ սուրբ էք վասն բանին՝ զոր խօսեցայ ընդ ձեզ. (Յօհ. ժե. 3)։ Եւ ոչ ինչ ընարութիւն արար 'ի մէջ նոցա և մեր, Հաւատովք արքեալ զսիրտս նոցա. (Գործ. ժե. 9)։ Տաճար Աստուծոյ սուրբ է որ էք դուք". (ա Կորն. գ. 17).

Երրորդ՝ արքութիւն եկեղեցւոյ է արք-
քարար և արդարացուցիչ խորհուրդն մը-
կրթութեան, յորում հոգիք արքին յա-
մենայն աղտեղութենէ մեղաց, և իրրև
անօթի ստոյգ և անարատ պատրաստին ար-
ընդունակութիւն զանազան աստուածային
և ձրիաւոր շնորհաց. և իրրև զկոյս մի
ստոյգ ներկայանան առաջի անմահ և երկ-
նաւոր փեսային Յիսուսի Քրիստոսի. և
հրաւիրին համարձակ մտանել 'ի լուսեղէն
և յերկնային առագաստն անեղծանելի
փառաց արքայութեան։ Այս որ ունի
զայս արքութիւն խորհրդոյ մկրտութեան,
և զմնացեալ հոգևոր՝ յորդեղրութիւն հօր
Աստուծոյ և 'ի ժառանգութիւն երկնային
փառաց՝ է եկեղեցի Քրիստոսի։ "Եթէ ո՛չ
ոք ծնցի վերստին՝ ոչ կարէ տեսանել զար-
քայութիւնն Աստուծոյ. (Յօհ. գ. 3)։
Արդէն և Քրիստոս սիրեաց զեկեղեցի, և
զանձն իւր մատնեաց վասն նորա. զի զնա
արքնացէ արքութեամբ աւազանին բանիւ.
զի կացուցէ ինքն իւր յանդիման փառա-
ւոր զեկեղեցի, զի մի ունիցի արատ ինչ
կամ աղտեղութիւն. կամ այլ ինչ յայս-

պիսեաց . այլ զի իցէ սուրբ և անարատ". Եփես . Ե . 25 .

Պարտէն սրբութիւն ամենայնաւոր աշխարհ և աստուածային էութեանն, զանազանի մարգարէութեամբ իւրով և անբաւ բարերարութեամբ , կամեցաւ և յօժարեցաւ կոչել զմեզ և մերձաւոր կացուցանել արարչին սրբարար խորհրդոց . և սրբել զմեզ յաղտոյ մերոց և զՀայրոյ ազգութիւն մեր փոխադրել 'ի փառաւոր պայծառութիւն աստուածային մարդութեան և սրբութեան իւրոյ . Պա և մեք պարտական եմք 'ի բաց մերժել յանձանց մերոց զչարաշար գործս մոլութեանց , և ուղղել զվարս մեր յառաքինական գործս բարեգործութեանց . և առանց զսրբութիւն վարուց և գործոց . որով լինուք արժանի ժառանգաւոր՝ յաւիտենական փառաց և երանութեան Հիւառաքի Քրիստոսի . զոր յորդորանաց սրբոյն առաքելոյն Պետրոսի ։ "Այլ ըստ սրբոյն՝ որ կոչեաց զձեզ , և դուք սուրբք յամենայն գնացս ձեր լինիջիք" . ա Պետր . Պետ . ա . 15 .

Այրարդ՝ Ճշմարիտ եկեղեցին Քրիստոսի
կոչի կամարձիկ . որ և 'ի յոյժ ասի
նուագանին կամ գաղտուկն , որ առ մեզ
ասի սիներգիական և ընդհանուր . բուսա-
բուսմ ուղղափառ և Ճշմարիտ հաւատք՝ և
բուսաչուսիչ աստուածանական ոգեշունչ գոր-
ծակցութիւն և սուրբ կրօնն քրիստոնէ-
ական , տարածեալ և սիրեալ է ընդ ա-
մենայն աշխարհ 'ի ծագաց մինչև 'ի ծագս
երկրի , քարոզեալ և աստուածանալ յա-
մենայն ազգս և 'ի բնուս : Զոսոր յա-
բուսմ անդուլ և յոյժ ազգի զանազանի
որ ընկալեալ զսիներգիածաւալ այսր ուղ-
ղափառ հաւատոյ զմարգարտաբերութիւն , յա-
բուսմ և անդրդուելի մնայ հաստատուն բան
զուարթութեան հանդուգնակին հաւատոյ , և
բուսաւոր բոցատրութեանն աստուածա-
շունչ զրոյ սրոյ հին և նոր կտակա-
բանաց , յաստուածազգեցիկ բանս մեծ-
ոց հոգեգումար սուրբ ծաղկոց , և 'ի սրբ-
բազան գիրս հարց սրոց , նա իրաւամբ
անուանի ազգի կամարձիկ եկեղեցոյ . որ
և անմոլար 'ի բանս հաւատոյ ուղղափա

ռութեան՝ կոչի ուղղափառ, զոր յոյնք անուանեն օրթոդոքս։ Այս եկեղեցին Քրիստոսի և անդամք նորին այնոքիկ են, որք կան անմոլար և հաստատուն ի սէրս հաւատս, զոր ուսոյց Յիսուս Քրիստոս իբրև հեղինակ հաւատոյ Աշմարաւթեան, և շնորհաբ խրատիւ սիրեսցուք ընդ ամենայն աշխարհ, զոր գրուեալ գիտասցուք ո՛չ կարեն յաղթահարել։ "Երթայք յաշխարհ ամենայն, և քարոզեցէք զաւետարանն ամենայն արարածոց։ որ հաւատայ և մկրտեսցի, կեցցէ։ և որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի։ (Մարկ. ԺԶ. 15)։ Վասն յուսոյն՝ որ պահի ձեզ յերկինս։ զորմէ լուարուք բանիւն Աշմարաւթեան աւետարանին, որ եհասաւ ձեզ որպէս ընդ ամենայն աշխարհ աճէ և պտղաբերէ։ որպէս և ի մէջի ձերում։ (Կոլոս. Ա. 5)։ Այլ յամենայն ազգս՝ որ երկնչին ի նմանէ, և գործէ զարդարութիւն, ընդունելի է նմա"։ Գործ. Ժ. 35։

Զորս՝ նշան կատարելութեան եկեղեցւոյն Քրիստոսի է լինել առաքելական

այսինքն անխախտ և անշարժ հաստատեալ
'ի վերայ հիման Ճշմարիտ վարդապետու-
թեան և քարոզութեան սրբազան առաքե-
լոյ , և անխափան պահեալ զաւանութա-
նական ուսմունքիս նոցին . որովհետև
Քրիստոս միրոգէս և բացարձակ հեղի-
նակ եղև Ճշմարտութեան հաւատոյ . և
առաջին և մշտնջենաւոր հիմն վերամբար-
ձող եկեղեցւոյ , անմիջապես վարդապե-
տելով և շնորհաբուղխ օրէնսդիր լինելով .
ըստ այնմ . "Եւ մի կոչեցէք ուսուցիչ , զի
ուսուցիչ ձեր Քրիստոս է . (Մատ . իգ .
10) : Զի հիմն այլ ոչ ոք կարէ դնել
քան զեղեալն՝ որ է Յիսուս Քրիստոս" .
(ա Կորն . գ . 11) : Իսկ սրբազան ա-
ռաքեալք եղեն քարոզիչք , և յայտնա-
բարբառ վարդապետք Ճշմարիտ հաւատոյն
Քրիստոսի . և այսր աբանելի հիմնար-
կութեանն քաջահմուտ գործակիցք և ըս-
պասաւորք . զոր բացայայտ ծանուցանէ
Հայր Գաբրիէլ 'ի մեկնութեան թղթոց
Պօղոսի . հատոր բ . յերես 533 , յա-
նելն . "Զի առաքեալքն ոչ ըստ անձանց

իբրեանց կամ բան զօրութեան եղեն հիմն եկեղեցական շինուածոց, որ բան վարդապետութեան զոր քարոզեցին"։ Եւ անդ 'ի 534 թղթատետրին. "Այսոր առաքեալք և մարգարէք կոչին հիմունք եկեղեցւոյ. այսինքն իբրև պաշտօնեայք հիմնարկութեան նորա 'ի ձեռն վարդապետութեան իբրեանց և վկայութեան ջանից 'ի տարածանել զհաւատս եկեղեցւոյ. ապա թէ ոչ՝ առաջին և վերամբարձող հիմն, մշտնջենաւոր և բացարձակ է միայն Յիսուս Քրիստոս"։

Ապա արդարեն առաքեալք՝ ոչ զոյգէս մարգարէք ընդ ազգս օրինակաց և առյուսապայն եղելոց վկայութեանն ցուցին մեզ զշնորհական օրէնս փրկչին Քրիստոսի. այլ ինքեանք իսկ անձամբք և տեղեաց մերձաւորք նմին և ասուածահրաշ արանշնչեալն ակնատեսք՝ և կենսաբուղխ բանիցն ականջալուրք լինելով՝ արձակ համարձակ վկայութեամբ քարոզեցին ընդ ամենայն աշխարհ զՔրիստոս հաւատս նորին. և զաւետարանն անմահ կենդանութեան։

Ասաի՝ որ և իցէ ազգ հաւատացեալ և մկրտեալ , որ կոյ անդրդուելի հաստատեալ յաշխարհատարած վարդապետութիւն առաքելական քարոզութեան՝ և 'ի բանս դաւանութեան , ասուցիս ասի եկեղեցի առաքելական . զոր ցուցանեն բանք վկայութեանցդս ողջամիտ քննողաց ։ "Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս . մկրտեցէք զնոսա յանուն հօր՝ և որդւոյ՝ և հոգւոյն սրբոյ . ուսուցէք նոցա պահել զամենայն՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ . (Մատ . իը . 19) ։ Եւ Ասաւծոյ շնորհք՝ որ յամենայն հոչակ հարիանէ զմեզ 'ի Քրիստոս Յիսուս . և զհոտ գիտութեանն իւրոյ յայտնի առնէ մեզ յամենայն տեղիս . (բ Կորն . բ . 14) ։ Զոր տեսանն և լուաք՝ պատմեմք և ձեզ , զի և դուք հաղորդութիւն ունիցիք ընդ մեզ . և մեր հաղորդութիւնն իցէ ընդ հօր և ընդ որդւոյ իւրում Յիսուսի Քրիստոսի" . Յօհ . ա Կաթ . ա . 3 ։

Եւ ընդ այսպան յորդութիւնս ուղիղ

բէն հասանոյ զանազան շնորհացն Աստուծոյ՝ մի զուցէ պատահեսցի մեզ ուրեայն և թափուր յամենայնէ զաւանիլ, իբրև զատիսր ինչ ծակատեալ և բեկեալ, յորում չէ հնար պարունակիլ և պահիլ ներքի ինչ հեղանուտ։ Եհա այսպիսի է սիրտ աշխարհասիրին՝ որ ունի զսիրտ իւր 'ի զանազան մտրութիւնս և 'ի դիւրաբեր հեշտութիւնս բեկեալ և բաժանեալ, և ոչ յամրոցութիւնս ամուսնաժիրութեան, և 'ի զորձս բարիս հատատիչս և կարգաբիչս արամց և հոգւոց, որոմ և անբնդունակ զաւանի երկնաւոր և հաղեալ բարեաց։ Այլ և մի երբէք լիցի մեզ ապահաւթեամբ և ժրատութեամբ խնայել զբարեաց և կարօտեալ եղբարց մերոց զանազան զգրաւութեան, զի մի կամեսցէ մեզ ուրեայն վերատարածցուք 'ի շնորհահոս աղբերէն կենաց 'ի հիւսուսէ Քրիստոսէ։ որ ասիսի էր ապահ և ընդարձակ երիտասարդն։ որոյ կարի զատանեալ գոյր 'ի շարաբգած ապահութիւնս երկրաւոր ստացուածոց, անհաճոյ թուեցաւ կամացն առա-

առնեն զարքաստաց . վասն որոյ ինքնին մերժեցաւ և հեռացաւ 'ի ծայրագոյն բարձոյն 'ի Յիսուսէ Քրիստոսէ . զերկրայինն լաւ համարելով քան զյաւիտենական փառս արքայութեան երկնից . և զրկեցաւ 'ի բնութենէ անիրաւապէս գանձուց ձրիապարգև շնորհաց . Պաւ . ժթ . 22 :

Փաւթաւղոսք ասացէն ըստ այսչափ յոյժ մեծութեան արքարար շնորհացն Քրիստոսի բարերար փրկչին մերոյ . և ընդ այսքան գանձոցի բարութեանն արանցիկի նշանաց քրիստոսական Հմայիս եկեղեցոյ նորա յարմարել և վայելչացուցանել զզարդս մեր . որով արժանապէս լիցաք անդամք եկեղեցւոյ՝ և բարեպակաս մարմին Քրիստոսի . ասասուածային յոգիս խոզաղութեան և սուրբ սիրոյ նորա ստացեալ 'ի մեզ զմի սիրտ և զմի հոգի : Պի բանակիս լինել յոժարեցաւք յայնպիսի խնդիրս անօգուտս և 'ի զանազան վէճս կարծեաց մրատապածին խորհրդոց մերոց . որով՝ ոչ միայն հարկանիմք 'ի միմեանց և միրաւթեամբ զմիրաս միմեանց . այլ և անասի մի-

Ճաքանութեամբ անմիաբանք և անհաշտ թշնամիք գոյով իրերաց ՝ի զանազան գայթակղութիւնս և ՝ի պէսպէս շփոթութիւնս մնաց կարծանեն զունկնդիրս մեր , յորոց արգելու զմեզ առաքեալն ընդ նմին և յաջորդք նորին հարք եկեղեցւոյ , որք ուսուցին զմեզ խաղաղութեանն և սիրոյն հոգւով վառեալ ուղիղ համառօտել զբանն ճշմարտութեան , և շնորհիւ սուրբ Հոգւոյն արծարծել զերկնային բորբոք աստուածային սիրոյն ՝ի սիրտս մեր . ՝ի Տիմոթ . ՝ի . 14 : Կաս . ժ՝ . 19 : Յոհ . ժԷ . 12 .

Մի պահանջողք երբէք ՝ի սիրելոյ զմիմեանս . զի զսէրն՝ զոր սիրեաց զմեզ կենարարն մեր Յիսուս , զայդէ ՝ի մեզ լի արդեամբք բեղմնաւորեալ . Դարձեալ՝ եթէ զոր սիրեմքս՝ եղբայր մեր է , քան զամենայն արարածս սիրելի Աստուծոյ , մանաւանդ և զին պատուական արեան Որդւոյն Աստուծոյ . Այս մի երբէք վերջացեալ լիցուք յեղբայրսիրութենէ ասեի զի մի աստուածսիրութեանն կնիք եղծանիցի ՝ի մեզ : Մի առեալ զեղբայր մեր ,

զի մի աստուածատեաց լիցուք , և մի ա-
խտակրութեամբ զանոխտակին Աստուծոյ
մերկացուք զպատմուճան լուսեղէն փառաց
'ի հոգւոյ մերոյ , և զսխերիմ բանսարկուին
զկիսցուք զսեռմոյր հանգերձ կոչտեան
և անարգութեան։ Մի յանդգնեսցուք նա-
խատական բանիւք խոցոտել և վիրաւորել
զսիրտս միմեանց , զի մի պարտապան լի-
ցուք զեհնի հրոյն յաւիտենական դատա-
պարտութեան ։ Յարգեսցուք զսէր միա-
բանական , զոր և իրրև զիսկական դրօշակ
պարծանաց քրիստոնէութեան զառաջեալ
կրեսցուք համարձակ . (Յոհ . ժգ . 35 .
Գործ . բ . 1) ։ Պարծեսցուք զսիրտս մեր
յամենայն մեղաց . զի սիրտ սուրբ՝ մաքուր
խիղճ , և միտք բարեզգած՝ աստուածային
շնորհօք և փառօք է զարդարեալ , և Հա-
գուստն սրբոյ յարդարեալ առեալ ։ Զի՞նչ
շահ ինձ 'ի սրբութեան նշանէ անտի ե-
կեղեցւոյ , որոյ լինելով իմ մասն և ան-
դամ , կուռեցիս՝ և բարդեցիս 'ի սրտի ի-
մում զապշտամեսակ ախտս մոլութեան և
զաբշահոտ մեղաց . և զիարդ համարձա-

կեցայց անուանել անդամ սրբանուէր ե-
կեղեցւոյն Քրիստոսի . եթէ 'ի բիւրաստ-
սակ յանցանս չարագործութեան ընկղմեալ
և զոշեալ ունիցիմ զիմ համակ սիրտ .
մի՞թէ 'ի պատմուճանս բնհնգեայս , և 'ի
զգեստս ծիրանիս զարդարի հագին . ոչ
ապաքէն պէտքէս հանդերձանք մարմնաւոր
զարդուց՝ բաւականք օծութեան ազնիւ և
քաղցրահոտ իւղոյ , և հեռանմունք վայր-
կենական հեշտութեանց՝ բոլորովին արտաք-
նայարդար գերեզման առնեն զհոգին , որք
արտաքուստ գեղեցիկք և հաճելիք են յաչս
մարդկան , բայց 'ի ներքուստ լի չարեաք՝ և
ատելի են յաչս Աստուծոյ : Մատ . ԻԳ .
27 : Հռոմ . ԺԳ . 1 :

Գաւառաստ եղիցուք հպատակիլ և հնա-
զանդիլ ողջամիտ խորհրդով և առաքինի
վարուք՝ ճշմարտութեան քրիստոնէական
բաւական վարդապետութեան , որ ընդ ա-
մենայն աշխարհ տարածեալ է և սփռեալ .
իբրև զլապտեր անշէջ և լի լուսով աս-
տուածային գիտութեան բոցափայլէ յաչս
ամենայնի . որով զաղանիք հաւատոյ յայտ-

նին պայծառագոյն , և առաջնորդեն մեզ
'ի նաւահանգիստ լուսաւոր վարուց և զար-
ծոյ առաքինութեան . յորում և ապահով
և անելկեան մնայ հոգի մեր 'ի խաւարա-
մած շոգեաց մեղաւոր մոլութեանց . և
իբրև զվէմս կենդանիս լինիմք սուրբ հո-
գեւոր , և փառք աստուածային տեսանի 'ի
մեզ վայելչագեղ յամենայնի . որով զօ-
բանամք յաղթել շար կրիչ մերոց և լինել
բարի և առողջ անդամ եկեղեցւոյ : Իսկ
մոլորեալքն իրաւամբ կոչին շար և տխաս-
ւոր անդամ եկեղեցւոյ :

Այս ընդհանուր տարածութիւն ճշմար-
տութեան ուղղափառ հաւատոյ , ոչ երբէք
յուսարեկ առնէ զսիրտ մեր , այլ քաջալե-
րէ եթէ կայ ընդ ամենայն աշխարհ մերձա-
ւոր օգնականն մեր Տէր Յիսուս Քրիստոս , 'ի
թիկունս հաստատել տկարութեան մերում :
Այս տիեզերատարածման ճշմարտութիւն հա-
ւատոյ , իբրև լայնատարած տաղաւար իմն՝
յապահովս կացուցանէ զառ յինքն ամրա-
ցեալս և զանդրդուելի ապաւինեալս , յա-
ճենայն աթկածից և 'ի բռնութեանց թշն-

նամուշն հոգւոց մերոց . ՅՕՀ . ԸԲ . 32 . 10 . ԺԱ . 6 . Հռոմ . Ժ . 12 ,

Խորհեսցուք զբարիս միմեանց , օրինակ վարուց բարեաց լիցուք եղբարց և ընկերաց մերոց . յորդորեսցուք զմիմեանս 'ի գործս առաքինութեան . Հայելի առաքինութեան լիցին գործք մեր և վարք . նմանեսցուք առաքելոյն սրբոց բանիւք և գնացիւք , սիրով և խաղաղութեամբ . ոչ միայն քարոզիչ ճշմարտութեան անուանիլ յօժարիսցուք , այլև գնոյն ճշմարտութիւնն գործով առաջի ամենեցուն մեծարել . ոչ յունկս այնքան լսելի առնել զաւետարանական կենսաձիր խրատս , որքան արդեամբ ծաւալել գնա 'ի յորդոր ամենեցուն առ այն . Վասն զի լոկ նշանաւ կամ զուղիղ գաւանութեան նոցին ունելով զկնիք՝ թէպէտ կարելիք վերաձայնիլ եկեղեցի առաքելական , բայց ոչ իրրև զառաքեալք հաճոյանալ Քրիստոսի Տեառն մերոյ և լինել ժառանգակից փառաց և երանութեանց նորին . Այլ զինչ օգուտ է , եթէ զուղիղ գաւանութիւն և զողջախոհ վարդա-

պեռուլթիւն առաքելոց դաւանիցիմք , և զյարս վատթարս և զգործս չարութեան ունիցիմք ։ Ոչ բանք և գործք մեր յարմարեսցին առաքելոյն սրբոց , որով արժանապէս և իրաւամբ անուանեսցուք եկեղեցի առաքելական , և արդեամբ չեռեալ Քրիստոսի և փառաբանիչ անուան նորին , ուղիղ հաւատով և բարի գործով ։ Տես ։ Ե ։ 16 , Փիլիպ ։ Դ ։ 17 ։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս Էօթն խորհրդոց Եկեղեցւոյ։ Օրինակ Ի խորհուրդն։

Խորհուրդն է գաղանի ինչ, որ 'ի մէջ երկուց կամ երից անձանց մնայ ծածկեալ. որպէս փրկութիւն մեր իբրև խորհուրդ մնայր 'ի թագաւն կամս արքոյ Աստուծոյ։ "Օխորհուրդն՝ որ ծածկեալ էր 'ի յաւիտանից և յազգաց". (Կոլոս. ա. 26)։ Խորհուրդն իմանի այն գործ, յոր գաղանութիւն մնայ երևի. զոր օրինակ, յորժամ ասասանիք 'ի յայտնի իրս զգաղտնի ինչ՝ ասելիք, խորհուրդ կայ ասա. իբր զի՝ զայլ ինչ ասասանել, և զայլ ինչ. հաստատել 'ի նմա։ Ընդ սա եօթն արքատաւ գործադրութիւն եկեղեցւոյ վայելչապար ասացաւ "խորհուրդ"։ Զ. ասն զի՝ 'ի զգալի և 'ի նիւթական գործառնութիւնս փրկարար խորհրդոցն՝ այսինքն 'ի գինին և 'ի նշխարն հաղորդութեան, 'ի Ջուրն մկրտութեան, 'ի միւռոնն և յամ-

նայն հարկաւոր նիւթս խորհրդոյն՝ զպէս-
պէս գազանի և գաներևոյթ ներգործու-
թիւնս շնորհաց խոստովանիմք։

Աշխարէն խորհուրդ ասելով որոշեցաւ
'ի նշանայն հին օրինաց, զի ամենայն
գործք հին օրինաց նշանք էին և ոչ խոր-
հուրդք, քան որում՝ չունէին ինչ սրբա-
բար ներգործութիւն. որպէս թլփատու-
թիւնն էր նշան ինչ, որ որոշէր զաստուա-
ծապաշտս 'ի հեթանոսաց. քան այնմ՝,
"Նշանակ ասա զթլփատութիւնն, կնիք ար-
դարութեան հաւատոյն. (Հռոմ. դ. 11)։
Որեմն զհին օրէնս կարելի միայն անուա-
նել նշանք սուրբ գործադրութեան, զի
միայն նշանակէին զսրբացուցիչ շնորհս
խորհրդոց նոր օրինայն Քրիստոսի, բայց
ոչ տային զշնորհս փրկութեան հոգւոյ.
քանզի՝ չունէին զներքին սրբարար գոր-
ծըս. այս է, զսրբութիւն հոգւոյ, զար-
դարութիւն ազատութեան յանիծից մեղաց,
զանմահութիւն կենաց յաւիտենից, զոր-
գեղրութիւն հօրն երկնաւորի՝ և զժառան-
գութիւն երանելեան փառաց։ Որպէս նը-

շանն գործիքական թէպէտ յանգիման առ-
նէ մասայ զայլ ինչ՝ բաց յիւրմէ, սակայն
ոչ ունի գնմանութիւն յայտանելոյ իրին.
զոր օրինակ, արշալոյսն է նշան բնական
ծագման արևուն. և ամպն ծագեալ յա-
բևմտից՝ է նշան անձրևոյ. բայց ոչ ար-
շալոյսն ունի գնկրգործութիւն արեգական.
և ոչ ամպն զանձրևոյն գնմանութիւն։
Այսպէս ամենայն գործք սառնգական օ-
րինաց՝ միայն ցուցանէին զարբագործ Բար-
հաբրգա Վրիսասոյ Տիեզն մերոյ. բայց
ոչ ունէին գնոյն ներկրգործութիւն շնարհաց։
Որպէս Ջուրն լուացման. որով արբութիւն
մարմնոյ կատարիւր 'ի ձեռն քահանայից.
"Լուացէք ջրով և սուրբ լիցի" (Եզեկ.
ժգ. 8). էր նշանակ մկրտութեան որով
լինի արբութիւն հոգւոյ։ Օծանումն զատ-
եկական գաւին, որ հրամայեցաւ արեամբ
Աստուծոյ արկել զսեմսք զրանց խորայէլացւոց.
որով ապրեցան անդրանիկք նոցա 'ի ժա-
մանակաւոր մահուանէ (Եգ. ժբ. 23).
ցուցանէր զխորհուրդ հաղորդութեան. ո-
րով փրկիմք 'ի յաւիտենական մահուանէ։

"Եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս. (Յօհ. ՁԴ. 54). Խոյն կախեալ զսաբեկայ՝ փոխանակ Խաչակայ եղեալ ողջակէզ, էր նշան Քրիստոսի. որ իբրև զգառն Աստուծոյ կախեցաւ զխաչափայտէն 'ի փրկութիւն աշխարհի. "Ահա՛ սասիկ գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի". Յօհ. ԺԱ. 29.

Ահա այսոքիկ ամենայն՝ նշանք կոչին, զի չէին հաղկաւոր առ փրկութիւն հոգւոյ. ըստ որում 'ի գործոյ գործեցելոյ անսի նշանակեալ լինէին կենդանարար շնորհք նոր օրինացս. իսկ 'ի գործոյ գործողին եթէ արդարք էին՝ յանուն Աստուծոյ գործելոյ ընդունին զպէտս խնամս Աստուծոյ. և եթէ մեղաւորք՝ առնելով զայս իբրև զգործ հանձնական՝ արդիւնաւորէին զողորմութիւնս Աստուծոյ. Իսկ նոր օրէնք կոչին "խորհուրդ". ըստ որում ահմանեալ է 'ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ առ փրկութիւն հոգւոյ. հարկաւոր առ 'ի տալ արժանաւորաց զշնորհս

գանազան սրբութեան . ըստ այնմ "Քան-
զի զստուերս հանգերձելոց բարեացն ա-
նէքն օրէնքն , և ոչ զնոյն կերպարանս ի-
րացն" . Նրբր . Ժ . 1 .

ԳԼՈՒԽ ԺԹ

Յաղագս Ներքին-Իրական խորհրդոցն։

Ի Ձեռն սրբարար խորհրդոցս՝ փոխի վիճակ բնութեան մերում. վասն զի 'ի վիճակէ յանցանաց վերածիսք 'ի վիճակ արդարութեան, և 'ի վիճակէ գաւառարութեան՝ 'ի վիճակ շնորհաց և փառաց։ մանաւանդ 'ի Ձեռն հոցս զարդարիմք կերբբնական ձրիւք։ Եւ իւրաքանչիւր խորհուրդ յարմարապէս հային առ Հօրն առաքինութիւնս, որոց երիցն են աստուածաբանական. այսինքն հաւատ, յոյս, և սէր. և չորքն բարոյական. որք են արիութիւն, արդարութիւն, խոհեմութիւն, և բարեխառնութիւն։

Անկրաւթիւնն է խորհուրդ սրբարար, որ սրբէ զհոգին 'ի սկզբնական մեղաց. և եթէ մկրտեալն իցէ շափահաս և ունիցի զմեղս ներգործականս՝ զայն ևս մաքրէ։ Սա խնդրէ "զհաւատ"։ Եթէ շափահաս

իցէ մկրտեալն , պարտ է նմա ունել զխոստովանութիւն քրիստոնէական հաւատոյ թեան . որ յայտնի երևի յերկոտասան մասանց բանիցն առաքելոյ հաստատեալ 'ի հանգանակն հաւատոյ ։ Զի սրբազան առաքեալք յաւուր Պենտեկոստէի , նախ քարոզեցին զՀաւատիս վարդապետութիւնն Քրիստոսի և ապա մկրտեցին . որպէս պատմի զքարոզութենէ սրբազան առաքելոյն Պետրոսի 'ի գործս առաքելոց (բ . 41) . "Ամենք յօժարութեամբ ընկալեալ զբան նորա՝ մկրտեցան" ։ Իսկ եթէ իցէ աղայ , բաւական է նմա հաւատք ծնողացն , կրնքահօրն , և կամ մկրտող քահանային ։ որ 'ի դիմաց նորին զխոստովանութիւնն առնէ , իբրև երաշխաւոր , որք և յետոյ պարտաւորին ուսուցանել նմա զՀաւատարութիւնս հաւատոյ . և կրթել 'ի բարի վարս ։ "Որ հաւատայ և մկրտեսցի կեցցէ" ։ Մար ժզ . 16 ։

Դրաշնն է խորհուրդ գօրացուցիչ . որ կնքէ զմկրտեալն անջնջելի շնորհաբ սուրբ Հոգւոյն ։ Սա ասի "զարթութիւն" . զրով

յաղթէ մոլութեանց , և յառաջադէմ լինի յառաքինութիւնս , իբրև քաջ զինուոր Քրիստոսի ։ "Եւ իբրև լուան (Հրեայքն) մկրտեցան յանուն Տեառն Յիսուսի ։ և 'ի դնել 'ի վերայ նոցա Պօղոսի զձեռն ։ եկն Հոգին սուրբ 'ի վերայ նոցա ։ խօսէին լեզուս և մարգարէանային" ։ Գործ . ԺԹ . 6 ։

Հաղորդութիւնն է խորհուրդ կենդանաբար , որ բաշխէ արժանաւորելոց զյաւիտենական կեանս ։ սա տպաւորէ 'ի հոգիս զաստուածային "սէրն" , որով միանամք ընդ Քրիստոսի ։ "Որ ուտէ զմարմին իմ ։ և ըմպէ զարիւն իմ , նա յիս բնակեսցի և ես 'ի նմա ։ և որ ուտէն զիս , կեցցէ վասն իմ" ։ Յօհ ։ Ձ ։ 55 ։

Ապաշխարութիւնն է խորհուրդ արդարացուցիչ , որ զհոգիս վճարողաց 'ի ձեռն կատարեալ զղջման՝ արձակէ 'ի մեղաց ։ և վերածէ յաստուածային շնորհս ։ սմա վայելէ "արդարութիւն" , առ 'ի յարգել զօրէնս Աստուծոյ , և առել զանօրէնութիւնս մեղաց ։ "Ամենայն որ զմեղս գործէ , նաև զանօրէնութիւնս առնէ , և ինքն

իսկ մեղքն անօրէնութիւն է" ։ Ա Յօհ ։ Գ ։ 4 ։

Վերջին օձումն է խորհուրդ առողջաբար , որ ասայ հիւանդաց զառողջութիւն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ։ սա ընծայէ զ"յոյս" , առ 'ի հաստատել 'ի յարկս սրբոց ասառուածային ողորմութեամբ ։ "Յարուցէ զնա Տէր , և եթէ մեղս ինչ գործեալ իցէ թողցի նմա" ։ Յակ ։ Ե ։ 15 ։

Կարգն է խորհուրդ հոգևոր իշխանութեան ։ սովաւ լինի մարդ պաշտօնեայ խորհրդոց և հոգւոյ բանաւոր հօտիցն Քրիստոսի ։ սմա պատկանի "խոհեմութիւնն" , առ 'ի բարեաւ կառավարել զժողովուրդ Տեառն , զոյնս փրկագործ արեան Որդւոյն Աստուծոյ ։ "Զգոյշ կացէք անձանց և ամենայն հօտիդ , յորում՝ եդ զձեզ Հոգին սուրբ առաջնորդս՝ հովուել զժողովուրդ Տեառն զոր ապրեցոյց արեամբ իւրով" ։ Գործ Ի ։ 28 ։

Պատկն է խորհուրդ սուրբ միաւորութեան , որով կենակցին այր և կին՝ միաւորութեամբ սուրբ սիրոյ առ 'ի պարարտ-

բիլ որդու

ԳԼՈՒԽ ԺԳ

ՅՈՂԱՓ ՀԵՂԻՆԱԿԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ։

Առաջին հեղինակ որբարար Խորհրդոյ է Հայր Աստուած. ըստ որում խշխանարարբ ցուցանէր նախահարոյ 'ի հին օրէնս զառաջիսն Խորհրդոյն՝ բազմակերպ օրինակաւք և նշանաւք. որ 'ի լրման ժամանակաց 'ի վերջանալ մարգարէից, և 'ի հասանել նախասահմանեալ աւուրց փրկութեան մերոյ. սահմանագրեաց փառակից Որդւովն զամենայն նախապրեալսն։ "Բազում մասամբք և բազում օրինակաւք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մարգարէիւք". Եբր. ա. 1։

Ընդհանրապէս հեղինակ խորհրդոյն է Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս. ըստ որում ինքն բացայայտելով զամենայն շնորհական խորհուրդս աւանդեաց աշակերտաց իւրոց. է որ բանիւ՝ և է որ գործով. վասն որոյ տիրապէս հեղինակ շնորհաբաշխ և արբացուցիչ խորհրդոյն եկեղե-

ցոյ է Յիսուս Քրիստոս . ըստ այնմ՝ , "Շնորհք և ճշմարտութիւն 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղև" ։ Զարտ է դիտել և զայս , թէ ո՞ւր և ե՞րբ և ի՞նչ եղանակաւ սահմանադրութիւն խորհրդոյն եղև ի Տեառնէ մերմէ . վասն որոյ 'ի տորին քաղաքացի համաւօտակի ։

Պկրտութիւնն՝ 'ի Յորդանան . ըստ որում ինքնին Յիսուս եկեալ անդ 'ի Նազարեթէ գալիլացւոց , մինչ էրն իբրև ամաց ԺԲ-ինանից ընկալաւ զՊկրտութիւնն 'ի Յովհաննէ . ոչ զի կարօտ էր մաքրութեան սրբացուցիչն ամենեցուն , այլ զի հաստատեսցէ զխորհուրդ Պկրտութեանն իւրով անձառելի խոնարհութեամբ ։

Խորհուրդ գրոշմին քանիւ աւանդեաց զկնի յարութեանն ասելով ։ "Այլ առջիք զզօրութիւն 'ի հաստանիլ Հոգւոյն սրբոյ 'ի վերայ ձեր , և եղիջիք ինձ վկայք յԵրուսաղէմ" . (Գործ . ա . 8) ։ Այսպէսն գրոշմիւ զօրանամք համարձակ խոստովանիլ զՔրիստոս հաւատս Քրիստոսի , և 'ի հոգւոյ մեր հեզանի շնորհ սուրբ Հոգւոյն

իրեն կնիք անջնջելի։ Եւ զայս պարտ է տալ զինքն մկրտութեան անյապաղ՝ չանցուցանելով 'ի վերայ զժամանակ ինչ։ Զի յայս խորհուրդ հայէր իջու�Հոգւոյն սրբոյ ազատնակերպ 'ի վերայ կենարարին մերոյ Յիսուսի՝ ըստ այնմ, "Եւ իրեն մերկրատեալս Յիսուս եկ վաղվաղակի 'ի ջրոյ ամատի։ և ահա բացան նմա երկինք։ և տեսանէ զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իրեն զաղաւնի, և գայր 'ի վերայ նորա"։ Մատ։ գ։ 16։

Հաղորդութիւնն խորհուրդ սքանչելի, զոր 'ի վերջին ընթրիսն սահմանեաց։ Նախ օրհնելով զհացն և զգինին, և ապա յայտնի բանիւ ասելով։ "Այս է մարմին իմ։ այս է արիւն իմ"։ և այսու եղանակաւ քահանայապետութեան մեզ աւանդեաց։ ըստ այնմ, "Զայս արասջիք առ իմոյ յիշատակի"։ Ղուկ։ իբ։ 19։

Աստուածաբանութեանն զարմանալի խորհուրդ՝ նախ քան զչարչարանս իւր բացարձակ կարողութեամբ և իրեն հեղինակ գաւութեան և իմաստութեան մեզայց կատա-

բեաց յաշխարհի . ըստ այնմ , "Գիտասջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս" . (Մատ . Թ . 6) ։ Եւ ցկինն մեղաւոր ասէր "Թողեալ լիցին քեզ մեղք քո" . (Ղուկ . Է . 48) ։ Իսկ յերեկոյի աւուրն միաշաբաթոջ՝ յետ յարութեանն երևեալ աշակերտացն 'ի վերնատանն անդ , ուր ժողովեալ էին՝ ետ նոցա զայս իշխանութիւն , յորժամ փչեաց 'ի նոսա ասելով "Ընդունիք Հոգի սուրբ" . այս ոչ զլրութիւն պարզևաց սուրբ Հոգւոյն ցուցանէր , զոր ընդունելոց էին յաւուր Պենտէկոստէի . այլ՝ զիշխանութիւն կապելոյ և արձակելոյ . վասն որոյ անմիջաբար ասաց . "Եթէ ումիք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նոցա . եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի" . (Յօհ . Ի . 23 ։

Զերազոյն իշխանութիւնս այս ոչ յառաքեալս միայն տարածեցաւ , այլ և յաջնայն օրինաւոր յաջորդս նոցա վասն որոյ զլխաւորն յառաքեալս երանելին Պետրոս զամենայն երիցունս եկեղեցւոյ պատուակիցս և աթոռակիցս զրէ ասելով . "Ան-

ոչ ցանես այսուհետև աղաչեմ իբրև զերիցակիցս և զվկայս շարչարանացն Քրիստոսի, որ և հանդերձեալ փառացն յայտնելոց հաղորդ". (Ա. Պետ. Ե. 1)։ Յս սուրբն Պօղոս զերեցկանիկ առաքեալն զարժանապատուութիւնն Տիտոսի գործակցի իւրում՝ հրատարակելով գրէ առ կորնթացիս. "Բայց եթէ Տիտոսի ինչ բանք են, իմ հաւասար է և ձեր գործակից"։ Յս սուրբն Պիտնէսիոս 'ի վերնագիրն թղթոյն որ առ Տիմոթէոս, այսպէս սկսանի. "Ի քահանայէ Պիտնէսիոսէ՝ առ քահանայակիցդ մեր Տիմոթէոս"։ Ասի յայտ է, թէ որ շնորհեացն զպատիւ և զիշխանութիւնս ընտրեալոց իւրոց՝ զնոյն և ոչ զանայ յաջորդաց նոցին. և զայս յաղաչանս իւր որ առ Հայր գոհութեամբ հանդերձ՝ յայտնի արար ասելով. "Ոչ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս". Յոհ. ԺԷ. 20։

Զայս բարձրագոյն իշխանութիւն յատաջ քան զկամաւոր շարչարանս իւր, Յիսուս փրկիչն մեր խոստացաւ տալ զիշխան-

բին առաքելոց երանելւոյն Պետրոսի . և այնու՝ ոչ միայն քարէր պատիւ զլխաւորութեան նորին յայտ առնէր , այլև՝ իբրև փոխարէն ճշմարիտ դաւանութեանն նախադասեալ այսր սքանչելի խորհրդոյ առնէր . որպէս թէ ասել կամէր Տէրն մեր . ով Պետրոս նախապատիւդ յառաքեալս՝ դու որ զիս Ս. ստուած և Որդի Ս. ստուծոյ խոստովանեցար՝ յայտնութեամբն Հօր Ս. ստուծոյ , 'ի դիմաց համօրէն աշակերտաց իմոց ասելով, "Դու ես Քրիստոսն Որդի Ս. ստուծոյ կենդանւոյ", ահա փոխարէն յայտնեմ քեզ զխորհուրդն , որ միայն աստուածութեանս է անկ . "Օ՛ի ով կարէ թողուլ զմեզս եթէ ոչ միայն Ս. ստուած" . կանխագոյն զայս քեզ ասացի իմանալ . իսկ յետ շարշարանաց և թաղման և յարութեան իմոյ այնուհետև ոչ միայն քեզ , այլ և ամենայն աշակերտակցաց քոց՝ առաքելոց իմոց հաւատար պարգևեցից յայտնապէս . "Տաց քեզ զփականս արքայութեան երկնից . զոր միոնգամ կապեացես յերկրի , եղիցի կապեալ յերկինս . և զոր արձակեացես յերկրի ,

եղիցի արձակեալ յերկինս։ (Մատ. ԺԶ. 19)։ Եւ այս երդէ եկեղեցին. "Որ խոստացար տալ զփանկանս արքայութեան երկնից երանելւոյն Պետրոսի"։ Եւ 'ի Տեառնեան կտակարանացդ հատոր Բ. 'ի Թղթահամարի 22. 'ի վերայ այսր բնաբանի գրի։ "Պետրոս մեծապէս զոմանի զտաւ, և ընկալաւ զանվրէպ խոստումն մեծի մասին պահելոյ նմա 'ի Տեառնէ"։ Այս միտ ընթանան ամենայն մեկնիչք և վարդապետք Հայոց։

Եւ թէ զիարդ զայս խորհուրդ ապաշխարութեան նախ քան զոնպարտական շարշարանս իւր Տէրն մեր խոստանայ, և յետ կամաւոր շարշարանացն և հրաշափառ յարութեանն ասայ ամենայն ընտրեալ աշակերտացդ իւրոյ. զի թէպէտ զինի ընտրելոյն նա նոցա զօրութիւն և իշխանութիւն հանել զդևս, և բժշկել զամենայն ախտս, բայց ոչ կապել և արձակել. ըստ որում դեռ չէր շարշարեալ. վասն զի փրկարար խորհուրդ ապաշխարութեանն՝ է ուրապէս արդիւնք շարշարանացն Քրիստոսի Տեառն

մերոյ, զի նովաւ հաճոյանայ ապաշխարութիւն մեր առաջի հօր Աստուծոյ։ Զայն որոյ 'ի խաչէ անտի խնդրելով զթողութիւն խաչահանուացն իւրոյ՝ պարգևէր յոյս թողութեան ապաշխարող մեղաւորաց. ըստ որում ճշմարիտ որդի Աստուծոյ՝ գոչէր առ Աստուած Հայր. և զոլով մեզ միջնորդ հաշտութեան՝ աղաչէր զնա ներել յանցանաց մերոց։ Աղաքէն յոյժ պատշաճաւոր եղև զկնի յարութեանն տալ զիշխանութիւնս զայս. զի զդէմն ապաշխարութեան մերոյ՝ միջնորդ ունելով զփրկագործ շարշարանս, զմահ և զթաղումն Յիսուսի կենարարին մերոյ, ընդունի զաստուածային ներողութիւնս. ըստ անվրէպ քարոզութեան իւրում այսպէս. "Պարտ էր շարշարիլ Քրիստոսի. և յառնել 'ի մեռելոց յաւուր երրորդի, և քարոզել յանուն նորա ապաշխարութիւն և թողութիւն մեղաց յամենայն ազգս. (Ղուկ. իգ. 46)։ Եւ յայս դիտաւորութիւն հայի երդ սուրբ եկեղեցւոյն. "Օրհնեմք զքեզ անսկիզբն Հայր որդւոյդ միածնի, զոր ա-

ռաքեցեր 'ի զարձումն մոլորեալ ոչխարին. զարձ՝ և զմեզ 'ի մեղաց որդւոյ քո շարշարանաք"։ Ընդողաց զ զիրս սուրբս յայտնի իսկ է այս ասմնայն։

Վերջին օծման խորհրդոյ՝ 'ի Տեառնէ սահմանեալ լինելն անտարակուսելի է. զի առաքեալք առ ժամանակաք նորին փրկագործ մեօրէնութեան 'ի գործ արկանէին զայս։ Ապա յայտնի երևի՝ թէ Յիսուս Տէրն մեր զայս խորհուրդ սահմանեաց, յորժամ ուսուցանէրն զգործս պաշտաման իւրեանց, տալով նոցա զզօրութիւնս և զիշխանութիւնս, որպէս ասաց. "Օհիւանդս բժշկեցէք". (Մատ. ժ. 8։) թէպէտ ասա ոչ որոշի, եթէ ի՞նչ եղանակաւ կատարէին զայս առ վտանգաւոր հիւանդս, բայց աղբատան աւետարանիչն Մարկոս յայտնի առնէ զայս եղանակ ինչ ասելով. "Եւ օծանէին իւղով զբազում հիւանդս, և բժշկէին զնոսա. (Մարկ. ՁԼ. 13)։ Եւ յետոյ 'ի ձեռն Յակոբայ առաքելոյն եղբօր Տեառն հրատարակեալ է. զի և մուծաւ յեկեղեցիս, և դասեցաւ

ընդ արքարար խորհուրդս եկեղեցւոյ։

Արքազարդ կարդն ձեռնադրութեան, որով աւանդի հոգևոր իշխանութիւն, առ 'ի կատարել օրինակս զեկեղեցական պաշտաման, և աւետարանական քարոզութեամբ հովուել զհաւատացեալս, է սիրապէս սահմանեալ 'ի Քրիստոսէ իրրև 'ի Ճշմարիտ քահանայապետէ անտի, որ նախ զաշակերտս իւր ըստ պահանջման ստաքեալական պաշտօնի կարգաւ յատուցման առատման բարձրացուցեալ, 'ի միջոց յաւուր հանդարձման հանէ զնոսա 'ի գլուխ լերին ձիթենեաց՝ որ մերձ էր 'ի գիւղն Բեթանիայ, և ամբարձեալ զաստուածեղէն ձեռս իւր՝ օրհնեաց զնոսա, ասելով նոցա զամենայն աստուածային շնորհս և զամենայն աշխարհաւոր բարձրութիւնս, որպէս զի և նորա յանջորդաց իւրեանց 'ի նոյն օրինակ մատակարարեսցեն զպաշտօն շնորհին։ "Երթան զնոսա մինչև 'ի Բեթանիա և ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա"։ (Լուկ. իգ. 50)։ Իւ առաքեալն զրէ առ Տիմոթէոս. "Լիր' ան-

փոյթ առներ զնորհայդ՝ որ 'ի քեզ են. որ տուաւ քեզ մարգարէութեամբ 'ի ձեռնադրութենէ երիցութեան". ա. Տիմ. գ. 14.

Պատկն է խորհուրդ եկեղեցւոյ յաջաջադրութեան անդ սահմանեալ Աստուծոյ 'ի վերայ նախածնողաց մերոց, առաջին կամքն զուգաւորելով զնաստ յանանջատ միաւորութիւն և յանբաժանելի ամուսնութիւն առ ահիրութիւն սերնդոց ազգի մարդկան։ Զատի Աղամայ այն ինչ սթափեալ իբր 'ի քնոյ, և տեսեալ զկին իւր զԵւայ առ ընթեր իւր՝ ինքեան իսկ համանման, և հաճեալ բնականապէս ընդ նա և սիրեալ զնա իբրև զիւր մարմնոյ մասն, սկսաւ մարգարէանալ յազգեցութենէն Աստուծոյ՝ և իբրև 'ի զիմաց Աստուծոյ՝ բարբառելով առ ապագայ սերունդս իւր ասէ. "Այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց, և մարմին 'ի մարմնոյ իմոյ. սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ. վասն այնորիկ թողցէ այր զՀայր իւր և զմայր իւր, և երթիցէ զՀետ կնոջ իւրոյ, և եղիցին երկուքն 'ի մարմին մի. Ծնն. բ.

23)։ Եւ զայս սուրբ ամուսնութիւն առն և կնոջ վերսին հաստատեաց հզօրագոյն քանիւ իւրով Տէրն մեր Յիսուս, առ ան-անջատ միաւորութիւն, յասելն վերադարձ. "Ապա ուրեմն ոչ են երկուք՝ այլ մի մարմին. արդ՝ զոր Աստուած զուգեաց մարդ մի մի մեկնեսցէ". Պատ. ԺԹ. 6։

Ի սկզբանէ աշխարհի զատհմանեալն Աստուծոյ զամուսնական զայս սուրբ միաւորութիւն, կամելով Յիսուսի մուծանել ի խորհուրդ սուրբ եկեղեցւոյ, անձամբ իսկ հաճեցաւ գնալ ի հարսանիսն Կանա գաղիլեացւոց առ ի մեծացուցանել զայս խորհուրդ՝ և հաստատել առ օրինաւոր աճումն բանական սերնդոյս. (Յօհ. Բ. 1)։ Մեծ է այս խորհուրդ ամուսնութեան քրիստոնէից, որ հայի ի Քրիստոս և յեկեղեցի. ըստ առաքելոյն. (Էփես. Ե. 32)։ Այսինքն նշանակէ զհոգևոր միաւորութիւն Քրիստոսի ընդ եկեղեցւոյ իւրոյ. զի եկեղեցին է սուրբ կոյս՝ և անարատ հարսն՝ անմահ երկնաւոր փեսային Քրիստոսի. զոր սիրէ իբրև զիւր մարմին և սնուցանէ

խնամքն իւրովք բարեբարութեան. և զարմանեն կենդանարար խորհրդով անմահաբար մարմնոյ և արեան իւրոյ. և զարդարէ զանապատն ոսկեօք և փառաւք. (Նիւս. Ե. 29)։ Ի յայտնի պարտաւորի իւրաքանչիւր ոք սիրել և գործանել զիւր օրինաւոր կին իբրև զիւր մարմին, ամուսնական իրաւամբ խնամելով և գնչանելով 'ի սկզբանէ ինքն բնութեան նորին. և կինն պարտի մնծարել զայր իւր յամենայնի հնազանդ լինելով, և երկնչելով յառնէ իւրմէ իբրև 'ի խնամածու տեառնէ. (Նիւս. Ե. 33)։

Մեծ է խորհուրդս այս 'ի շնորհական օրէնս Քրիստոսի. զի առն և կնոջ քրիստոնէից ամուսնացելոյ՝ այս միութիւնն է ընդ իրեարս, որ աճեցուցանէ զծնունդս հաւատացեալս և բազմացուցանէ զշնորհաւոր նակ որդիս Աստուծոյ. (Գաղ. դ. 27)։ Բայց ինքեան բնականապէս մեծ է և սքանչելի խորհուրդս այս ամուսնութեան. զի երկու անհատք անձանօթք իրերայ՝ միանգամայն յարին առ միմեանս և սիրայօգ կապակցին այնպէս՝ մինչև մոռանալ զազ-

գանան՝ զբարեկամս՝ զմերձաւորս ծանօթս՝ և զոր մեծն է զնոցա անդամ իւրեանց։ Գաղանեաւծաւուկ ողեխառնութիւն իմն է այս ծածկեալ 'ի բնութեան մերում։ և վերին արարչական անսպառութեանն մեծ խորհուրդ՝ 'ի բազմաւորութիւն ծննդոց մարդկան օրինաւոր միաւորութեամբ։ Ուրդ՝ եթէ ոք 'ի կանանց և յարանց խառնրի յայսր սիրասահման օրինաւոր ամուսնութենէ, և խառնակին ազգաք ընդ ազգաս արտաքոյ կանոնաւոր ամուսնութեան, և կամ եթէ ոք ընդ օտար ամուսնոյ շաղաշարի՝ շուն կոչին այնպիսիք և պոռնիկք, մանաւանդ եղծիչք ամուսնական հաւատարմութեան, և հակառակք աստուածային բարեկարգութեան։ որով ոչ միայն յանարգեալս դասին 'ի բարեմիտ մարդկանէ, այլ և զրկին յաստուածային շնորհաց և փառաց՝ անկեալք ընդ դատապարտութեամբ ահեղ դատաստանին Աստուծոյ։ "Պատուական է ամուսնութիւն և սուրբ են անկողինք։ բայց զշուն և զպոռնիկս դատէ Աստուած"։ Նշբ։ ժգ։ 4։

ԳԼՈՒԽ ԺԴ

ՅՈՐՀՐԴՈՅ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ։

Ի խորհրդոյ եկեղեցւոյ ոմանք են հարկաւորք ամենեցուն, և ոմանք հարկաւորք ոչ ամենեցուն. ոմանք են կրկնելի, և ոմանք ոչ կրկնելի. զորս պա՛տ է գիտել և ճանաչել մեզ։

Մկրտութիւնն է հարկաւոր ամենեցուն առ 'ի փրկիլ 'ի սկզբնական մեղաց, և լինել ժառանգաւոր աստուածային հանգերձեալ փառաց. սա չէ կրկնելի, զի խորհուրդ մկրտութեան ունի զնսկական կերպարան փրկարար խաչին և կամաւոր կենսաձիր մահուանն Քրիստոսի Տեառն մերոյ։ Ուստի յարարողութեան անդ խորհրդոյ մկրտութեան երիցս ընկղմելն զնքեխասն 'ի ջուր անդր, նշանակէ զերեքօրեայ թաղումն փրկչին մերոյ. զի 'ի ձեռն կատարման խորհրդոյ մկրտութեան՝ լինիմք խաչակից և մահակից Քրիստոսի. որով և փառաց նորին ժառանգակից։ Որպէս

որպէս անհնար է վերանալն խաչիլ Քրիս-
տոսի և 'ի մահ անգր գալ, նոյնպէս միան-
գամ մկրտելոյն անհնարին է կրկին ան-
գամ մկրտիլ, և մուտծելն անգամ՝ է մե-
ղանչումն շարաշար։ "Եթէ ոչ գիտէք,
զի որ միանգամ մկրտեցայք 'ի Քրիստոս
Յիսուս 'ի մահ անգր նորա մկրտեցայք։
Թաղեցայք ընդ նմին մկրտութեամբն 'ի
մահ նա". Հռոմ. զ. 3. և Եբր. զ. 4։

Որոշեմ է հարկաւոր ամենայն մկրտելոց
առ 'ի զօրանալ շնորհօք սրբոյ Հոգւոյն
և արիանալ ընդդէմ հնարից չարին. և
այս իսկ է անկրկնելի. "Բանզի անզեղջ
են շնորհք և կոչումն Աստուծոյ". Հռոմ.
ժա. 29։

Խորհուրդ հաղորդութեան կենարար
մարմնոյ և արեանն Յիսուսի փրկչին մերոյ՝
է հարկաւոր ամենայն քրիստոնէից հրա-
ժարելոց 'ի մեղաց կատարեալ զղջմամբ
առ 'ի հաղորդակցիլ սրբութեան և ան-
մահութեան Յիսուսի Քրիստոսի. և սա
է խորհուրդ կրկնելի։ "Բանիցս անգամ
թէ ուտիցէք զհացս զայս, և զբաժակս

ըմպիցէք, զմահ Տեառն պատմիցէք, մինչև եկեսցէ նա". ա. Կորնթ. ժա. 26։

Աշխարհաբարութիւնն է հարկաւոր ամենեցուն անկելոց 'ի ներգործական մեղս. առ 'ի զգլալ սրտիւ և խղճիւ մոտաց հրաժարիլ 'ի մեղաց և զհետ լինել գործոց քարեաց, և կատարեալ խոստովանութեամբ առաջի քահանային՝ հասանիլ աստուածային ներողութեանն. և այս խորհուրդ է կրկնելի։ "Տէր՝ քանիցս անգամ եթէ մեղիցէ ինձ եղբայր իմ, և թողից նմա, մինչև յեօթն անգամ։ Ասէ ցնա Յիսուս ոչ ասեմ քեզ՝ թէ մինչև յեօթն անգամ. այլ մինչև յեօթանասնեկին եօթն"։ Մատ. ժը. 21։

Վերջին օծման խորհուրդն որ կատարի 'ի ձեռն աղօթից կարգաւորաց՝ է հարկաւոր վասնզաւոր հիւանդաց՝ վասն թեթևութեան և բժշկութեան յաւուցն և վասն ներողութեան յանցանացն, և գիւրութեամբ հասանելոյ հոգւով առ վերջին վախճանն աստուածատեսութեան։ Այս խորհուրդ չէ այնչափ յոյժ հարկաւորա-

զոյն ամենեցուն, որպէս զնախասացեալ խորհուրդն, որովք միայն լինի փրկութիւն հոգւոց, և ժառանգութիւն սատուածային երանութեան և յաւիտենական փառաց. և այս խորհուրդ է կրկնելի՝ և կարեւոր հիւանդաց կարի սակաւակիրց, եթէ ժամանակն՝ տեղին և միջոցն ներեսցէ. զոր առաքելոյն բանի. "Հիւանդանայցէ ոք 'ի ձէնջ՝ կոչեսցէ զերիցուսն եկեղեցւոյն՝ և արասցեն 'ի վերայ նորա աղօթս. օծցեն իւղով յանուն Տեառն. և աղօթքն հաւատոյք փրկեսցեն զաշխատեալն. և յարուցցէ զնա Տէր, և եթէ մեղս ինչ իցէ գործեալ՝ թողցի նմա" . Կաթո. Յակ. Ե. 14.

Որդ՝ եթէ հիւանդանայցէ ոք 'ի ձէնջ ասէ՝ հիւանդութիւն վնասակար, յորմէ հրաժեշտ տայցեն Հարստարութիւնք բժշկաց՝ պարտ է զհոգեւոր բժիշկս կոչել, որ ոչ կարօտանան բանիւքոց և արմատաց գառն գեղոց և հեղանիւթից առ բժշկութիւն. այլ ազգաւ գեղ բժշկութեան նոցա է Ջերմեռանդն դիտաւորութեամբ ա-

զօթք և խնդրուածք սրտի՝ ըստ Սարգսի Շնորհալւոյն մերոյ . "Ոչխարիս բժիշկն Յիսուս 'ի կարիս հիւանդին խոնարհեցուցանեն" . Ա՛վ սքանչելի զօրութեան աղօթից արժանաւոր և ճարտասիրս հոգևոր արանց . "Օ՛ի աղօթքն (ասէ առաքեալն) հաւատովք՝ փրկեսցեն զաշխատեալն , և յարուցէ զնա Տէր" . 'Ի բնաբանի սոսա տուրբ վարդապետն մեր Շնորհալին Սարգիս բացայայտ ասէ . "Նշմէ ւ՛չ իւղն ինչ ասէր զառողջութիւն հիւանդին . այլ՝ անուն Տեառն" . Սանաւանդ Յիսուս հեղինակն խորհրդոց այսպէս ուանդեաց առաքելոց զայս խորհուրդ՝ յասելն . " 'Ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն և բժշկեսցին" . (Մարկ . ժզ . 18) . Լուսոյ սրբազան առաքեալք մերթ յանուն Տեառն բժշկէին զհիւանդս , և մերթ՝ ձեռս դնելով . "Յանուն Յիսուսի Քրիստոսի Նազովրեցւոյ արի՛ և գնա" . ասացին 'ի ծնէ կաղին . (Գործ . ի . 6) . Նա եղև հօրն Պողոսայ 'ի Ջերմն և յախտ թանչից հիւանդանալ՝ դնել . առ որ մտեալ Պօղոս՝ և կացեալ յաղօթս՝ եդ ըզ-

ձեռն և բժշկեաց զնա" . Գործ . իբ . 8 .

Իսկ ոմանք յառաքելոց սրբոց նկատեալ , զի առ իսրայէլեան ազգն սովորութիւն էր յարգանօք պահել և ունել զսուրբ իւղ 'ի մարգարէից անտի , զոր գործածէին 'ի նուիրեալսն Աստուծոյ՝ առ որս գտանիւր և իւղս անուշահոտս և ծանրագինս . (ա Թագ . ժզ . 1 . Պաղմ . ձբ . 18 . Յոհ . ժբ . 3) . Զ ասն որոյ երբեմն նոյն նիւթով իւղոյ մերձենային առ հիւանդս և օծանէին զնոսա , և այնու բժշկէին . բայց զօրութիւնն եղանէր յաղօթից նոցա և յանուանէն Յիսուսի Քրիստոսի .

Այլ հիւանդաց յոյժ կարևոր են աղօթք սրբակրօն կարգաւորաց , գնելով ըզձեռն 'ի վերայ ախտացելոյ , որպէս Տէրն մեր Յիսուս վճռելով պատուիրեաց . "Զեռս դնել 'ի վերայ հիւանդաց" . Ընդ որմն բժշկութեան՝ որ պարզեի տացեալ հիւանդաց հաւատացելոց , ոչ զձեռն դնողքն է 'ի վերայ հիւանդին՝ և ոչ իսկ աղօթողին . այլ երկնաւոր բժշկապետին Յիսուսի Քրիստոսի . Իսկ պաշտօնական և

որբակրօն երիցունք սպասաւորք են՝ոյն շքեղ-
հին , և արժանահայց մաղթանօք Ը՞հայդ՝
գրրուածոյք իւրեանց՝ արժանաւորս Ը՞ղ-
դունակս շնորհայ առնեն զհաւատացեալ՞ն։
Ուրեմն այս խորհուրդ բժշկութեան անշ-
շուշտ կատարի առ հիւանդս և տեառնա-
գրութեամբ սրբոյ խաչի՝ և աղօթիւք , զոր
յանձամբ գործադիր լինին ջերմեռանդ և հո-
գեսէր աղդ մեր 'ի վանդաւոր հիւանդս
իւրեանց՝ կոչելով զքահանայս և խնդրելով
հաւատով մեծաւ զաղօթս և զնեմերցմունս
սրբոյ Աշեստարանի բժշկութեան . և այս
իսկ է վայելչական կատարումն խորհրդոյն՝
յառաջին գարուց անտի եկեղեցւոյ մեծա-
բեալ . զորմէ գրէ իրաւամբ Հայր Գար-
բիէլ 'ի մեկնութեան թղթոց Պօղոսի հա-
տոր ա . 'ի թղթահամարի 910 . "Ը.Ա
երբեմն գնելով զձեռն 'ի վերայ ախտայե-
լոց որպէս Տէրն խոստացաւ . (Մար . ժզ .
18) . Այս բարդում անդամ աղօթիւք և
տեառնագրութեամբ խաչի . որ է արարո-
զութիւն 'ի կիր արկեալ յառաջին գարուց
եկեղեցւոյ" . Տես զի կարող է ամենա-

զրուխիւնն Զիսուսի թաշկինակաւ
ամակաւ արբազան առաքելոյն Պօ-
հրաշագործել 'ի հիւանդս՝ յօժարե-
յուղիչ հաւատս նորին իսկ ապնա-
լելոյն՝ և մաղթողացն զնոյն . որպէս գրի
'ի Գործոց . ԺԹ . 11 . "Եւ զօրութիւնս
ոչ սակաւս առնէր Էաստուած 'ի ձեռն Պօ-
ղոսի . մինչ զի և 'ի հիւանդս տանել 'ի քրբ-
տանէ նորա թաշկինակս կամ վարշամակս ,
և մերժել 'ի նոցանէ ախտքն և այսոց
չարաց երթալ" :

Խորհուրդն ձեռնադրութեան՝ որ է
եօթնատաճման իշխանութեան քահանայա-
կան կարգի , հարկաւոր է կոչեցելոց և ընտ-
րելոց 'ի պաշտօն սրբարար խորհրդոց ըն-
պատաւորութեան՝ և հոգեւոր հովութեան .
որով կարգի հոգեւոր անուն ստուածային
սուրբ և փրկարար խորհրդոց . և իբրև
հովիւ արիւն և քաջ առ 'ի առաջնորդել
'ի բարի վարս , և խնամել քրիստոնէական
ողջամիտ վարդապետութեամբ զբանաւոր
հօտն Ջշմարիտ հովուապետին Քրիստոսի .
և այս խորհուրդ չէ կրկնելի 'ի վերայ ան-

ձին մեզ՝ ընդունողի միանգամ զնայն շնորհ։ "Մի անփոյթ առներ զշնորհսդ՝ որ 'ի քեզ են, որ առաւ քեզ մարգարէութեամբ 'ի ձեռնադրութենէ երիցութեան։ յայդ խորհեաց և 'ի գոյն կանխեալքիր։ զի զոր յաստուածպիտութիւնդ ամենեցուն յայտնի լիցի" ։ ա Տիմ. դ. 14։

Ուստանօր արժան էր մեզ քաղել զբանս զանազան խրատուց և յորդորանաց կարևորագոյն եղերաց այսր հոգևոր և երկնաքերձ ասպնձանի քահանայութեան՝ յաստուածային սրբազան գրոց։ և միանգամայն նուիրել ասացի հարց սրբոց՝ իրրև զուղեկցելոց անմահ կենդանութեան։ Այլ քաջագոյն նկատեալ իմ յաստուածաշնչոյն և գերազանց բանս խրատական և յորդորական։ նուիրեալս 'ի սրբազան և շնաշխարհիկ մեծ հայրապետէն մերմէ 'ի Ներսիսէ Շնորհալւոյ՝ ոչ սրբազան գաւառ եպիսկոպոսաց և քահանայից։ որ է ազգս և բաւական խրատս և աստուածազգեցիկ յորդոր ոչ խրատանչիւր ասպնձանաւորս յոյժ վայելչական։ Զարս եմք ոչ յաս-

տիճանաւորաց՝ աշխարհի մեռք ընթերցեալ և արդեամբ կերպարանեցի 'ի նոյն նմանութիւն աստուածաշնչոյ բանից նորին՝ հարկաւ զհրեշտակացն յանձին բերէ զանարատութիւն, անվրէպ և անդատապարտ Ճեալով 'ի պաշտօնի իւրում։ 'Ի վերայ այսց հոգեւոր բանից նորին երկրորդել բարդել և յաւելուլ զբանս մեր յորդորանաց անպատշաճ համարեցաք, այլ միայն կնքել զմեծայարգ և զկրկնապատիկ վարձուց արժանաւորութիւնս պաշտօնատէր հոգաբարձուաց եկեղեցւոյ՝ բանիւ սրբազան առաքելոյն Պօղոսի արժան դատեցաք, զոր գրէ նա յայտնելով զարժանին տրիտուր վաստակաւորաց եկեղեցւոյ յասելն. "Որ բարւոք վերակացու լինին երիցունք, կրկին պատուոյ արժանի եղիցին, մանաւանդ որ աշխատիցին բանիւ և վարդապետութեամբ". ա Տիմ. Ե. 17։

Պատկան է խորհուրդ եկեղեցւոյ, յորում այր և կին համահաճութեամբ սրտի և կամաց լծակցին յօրինաւոր և 'ի տուրք ամուսնութիւն։ Սա է ոգատարար հարկա-

որ ամենեցուն , առ բնականաբար վարել յաշխարհի . և բան առաւածային միոնոյն անքակտելի միանալ յանարատ սէր կենակցութեան՝ և զուգիլ իրրև 'ի մի մարմին բարոյական և օրինաւոր միութեամբ , ծընանիլ զորդիս և ձեռնաւորութեամբ միմեանց սնուցանել զնոսա , և կրթել 'ի բարի վարս և յաստուածպաշտութեան , բնելով օրինակ բարի վարուց և առաքինութեան առ որդիս իւրեանց . և այս իսկ է անձխաբելի և հարկաւորապէս պարտք հարց և մարց . Ապա բարի է առն և կնոջ բերել յօրինաւոր ամուսնական միութիւն , յորոյ բազբոջին որդիք առ անընդհատ անձրեւութիւն անչնգոյ մարդկան . "Ոչ է բարւոք մարդոյ միայն լինել . արասցուք զմա օգնական բան զմա . (Ծնն . բ . 18) . Օր եթէ ամուսնանայցես , ոչ մեղար . և եթէ ամուսնանայցէ կոյսն , ոչ մեղաւ . բայց նեղութիւն մարմնոյ ունիցին այնպիսիքն , այլ ես խնայեցի 'ի ձեզ" . ա Կորն . է . 28 .

Դ. երիտասարդաբար խորհուրդս այս ա-

մուսնութեան է հարկաւոր ամենեցուն ըստ-
նականապէս . զի մի լեցի զեղծիլ 'ի շարա-
գրոցիս ախտս պոռնկութեան . այլ որ ան-
կարանոյ ողջախոհութեամբ յաղթել ան-
յապ կրիցն ցանկութեան՝ կարէ սանձել
զառնութիւն նորա օրինաւոր ամուսնու-
թեամբ ։ "Բայց վասն պոռնկութեան իւ-
րաքանչիւր որ զիւր կին կալցի . և իւրա-
քանչիւր որ կին՝ զիւր այր կալցի"։ (ա Կրն .
Է . 2) ։ Եւ այս խորհուրդ կարէ կրկնել
'ի վերայ ամուսնացելոց եթէ մինն մեռցի .
զի ոչն այս ամուսնական միութիւն առն
և կնոջ անկարելի է բաժանել 'ի միմեանց .
բայց միայն մահուամբ միոյն ։ "Զանազի
կին առնակին 'ի կենդանի այր իւր կապեալ
կայ օրինաւք . իսկ եթէ մեռցի այրն , ար-
ձակեալ է յօրինաց առն ։ Այսպա ուրեմն ,
մինչ կենդանի է այրն , շուն կոչի՝ եթէ
լինիցի առն այլում . և եթէ մեռցի այրն՝
ազատ է յօրինացն չհամարեալ շուն՝ եթէ
լինիցի առն այլում" . Հռոմ . Է . 2 , 3 ։

Արդ՝ ազատութիւն ոչ զոյ յօրէնս ա-
մուսնութեան 'ի հատուցման մշանջենաւոր

պարտուց ամուսնական օրինաց . որով
ծառանալ ընդ իշխանութեամբ իրերաց՝
ոչիրն 'ի վերայ անձանց միմեանց . և չեն
իսկ ազատք , այլ ծառայ միմեանց , ցոր-
չափ ոչիւք 'ի նոսա օրէնք ամուսնական մի-
ութեան . (ա Կորն . է . 3 , 4) ։ Կամաւ
լծակցին ընդ միմեանս յամուսնութեան
ժամու , և ակամայ պարտաւորին բառնալ
զանկարութիւնս միմեանց 'ի զանազան դիպ-
ուածս աշխարհային բերմանց . եթէ 'ի
ծնունդս զաւակաց՝ ցաւք և տառապանք
անհնարին . իսկ եթէ մահ զաւակաց դի-
պեսցի՝ ազգուն և արտմութիւն առչորէ
զսիրտս նոցին ։ Եթէ անծնունդ լիցին՝ ոչ-
չափ հոգք են նոցա , իբրև անմխիթար
յամուսնական միձակէ անտի ։ Եւ եթէ
քաղցածին՝ քաղաւմ աշխատութեանց առա-
ւել կարօտին 'ի բարեաց դարմանել զնոսա
և 'ի գտանելոյ ։ Եթէ համարաց
միմեանց պատահեսցին և քաղցր վշտակից
և կարեկից իրերաց , չիք պիտոյ նոցա այլ
ևս առնթ և նեւթ բերկրութեան և միխ-
թարութեան ։ Իսկ եթէ ընդ հակառակն

պատահեցին , այսինքն՝ բնութիւնք անհամ-
բոյք՝ բարք անպիտանք , փորք շատակերք
և մոլեկանք , չիր այնուհետև նոցա միսի-
թարութիւն . մահուան միանգամ ստրանն
օր առեր . իբրև զայս ծանաւ առաքելն
յանհնարին առատութենէ և անհանգստութենի
տուայտանս տիրութեանն . և յայնժամ ար-
ժան է զնահատութիւն նոցին կոչել առն
ցաւոց և հոգոց ։

Վասն ընդ արբան զմարութիւնս նե-
զութեանցդ և ընդ ծանրութիւնս ոմանք
կան կենցաղավարութեան տարակուսեալ
արքայն առաքելոյն . համարձակեալ ասէին
ցՏէր մեր Յիսուս . "Եթէ այդպէս ինչ
վնաս իսկ ընդ այր և ընդ կին՝ լաւ է շա-
մուսանալ" . (Պատ . ժթ . 10) ։ Այսն
որոյ Տէրն մեր Յիսուս վերայոյժանէ ըզ-
միտս նոցին յաշխարհային բաղձանս ծը-
փանաց , և ասէ զնոսա յաստուածային
ազատարար ամենգակութիւն , որ է միձակ
կուսութեան . յորում լինի օրհնակատու-
թեամբ աստուածային շնորհաց Այնոքիկ և հա-
զալ միայն զգաշտան Աստուծոյ կատարել

անդրադարձաւ . և յարձակեալ սխալասէր կրից բռնութեանն մարմնոյ և առնուլ զոյսակ ի բռնութեանն երկնից արդարութեան . ի սան որոյ զոյս ևս պատասխանէր աշակերտաց իւրոց . "Ի՛նչ սանձեցեալն բռնակալն են այդմ բանէ . այլ որոյ սաստեալ է . . . և են ներքինիք՝ որ զանձինս իւրեանց տրարին ներքինիս վասն արքայութեանն երկնից . որ կարող է առնել՝ առցէ" . Մատ . ԺԹ . 11 , 12 .

Նշանն որ ներքին յոժարութեամբ տրան զկերպարանս զայս կրան հրեշտակային բարձեալ սանձ . հրամարեալ յարարածոց ճանն յանդգնութենանց աշխարհային վարել մանց . ժուժկալեալ ոգեղէն մասք և ի բոց մերձեալ զանձանն առին զարդեղս մարմնական հեշտասիրութենանց . և ապատ արհեալ զխորհուրդ մասին ի հոգոյ ժամանակաւորաց . արարածոց մեռան ծառայել կամացն Աստուծոյ . և սանձեցեալ աշակերտել Հիսուսի կենարարին մերոյ և արշալոյս զՀաճոյս նորին . որոյ բարեխաղաց յուսանեն վկայութիւնքս . "Ի՛նչ սանձեալն

որ որ եթող զառն՝ կամ զեղբարս կամ զքարս կամ զհոյր կամ զմայր՝ կամ զկին կամ զորդիս կամ զագարակս վասն անուան իմոյ , հարիւրապատիկ ասցէ և զկեանս յաւիտենականս ժառանգեսցէ . (Մատ . ԺԹ . 29) ։ Ընդ կամիմ զձեզ անհոգս լինել . զի որ անկինն է , հոգայ զՏեառն՝ թէ որպէս հաճոյ լիցի Տեառն . և որ կանամին է , հոգայ զաշխարհս թէ որպէս հաճոյ լիցի կնոջ իւրում" . ։ Կորն . Է . 32 ։

Օգոստինոս ասել եթէ որ հաճեսցի յաղագս գերագանց շնորհի կուսութեան , ընթերցցի զյառուկ Ճառս կուսութեան Ասկիբերանին , զորմէ ընդարձակս վարդապետէ ։ Իսկ մեք Ընտրեալս ասեմք զիւրաքանչիւրոց զկոչումն . եթէ աշխարհականաց ամուսնացելոց ըստ կամացն Ընտրեալ , և եթէ կուսանաց հրամարելոց կամօք յաշխարհէ ըստ հոգևոր սպասաւորութեան պաշտամանցն Ընտրեալ՝ վկայութեամբ արքայական առաքելոյն Պօղոսի վերջացուցեալ զբան մեր . եթէ , "Իւրաքանչիւր որ զիւր

շնորհս ունի յԱստուծոյ , ոմն այսպէս և ոմն այնպէս" . (ա Կորն . Է . 7) : Ընդ յամենայնի խոնարհեսցուք առաջի աստուածային շնորհաց՝ ներքին կոչման նորին հընազանդելով : Ընթանան մտաք՝ կենդանի հաւատով և մաքուր սրտիւ , պինդ կայցուք զաւետարանական և զառաքելական ողջամիտ վարդապետութիւնս , և զսրբազան աւանդութիւնս իբրև զպանձն անկապտելիս առնել ՝ի գանձարանի մտաց մերոց : Եւ ամենայն զգուշութեամբ պահպանեսցուք զհոգիս մեր , զի մի ոք ՝ի շաբայոյդ խարդաւանողաց՝ հոգեկրուսա խաբէութեամբ որսացի զմեզ ՝ի ծուղակ կորստեան , յաֆիշտակելով զբարի խորհուրդս մտաց մերոց և ունայնաբանելով ՝ի մեզ զքրիստոսական սրբարար շնորհն , և զէապէս մտացածին բանահիւսութեամբ մոլորեցուցեալ զմեզ ՝ի զանազան աղանդս ընդդէմ քրիստոնէական ճշմարիտ վարդապետութեան : Ո՞ւ ասն որոյ ՝ի վախճան բանիցս զառաքելոն բան վայելուչ դատիմ գրել՝ ՝ի զգուշութիւն ամենայն մտաց՝ առ հաստա-

պինդ կալ յուղղափառ հաւատս Աշմարտութեան , զոր ուսաք 'ի շնորհապարգև աւետարանական բանից Յիսուսի կենարարին մերոյ , և յառաքելոց սրբոց քարոզեալ՝ և 'ի սրբոց հարց մերոց բացատրեալ . ըստ նոցա անմոլեալ . "Զոյշ լերուք՝ մի ոք ելցէ՝ որ զձեզ կողոպտիցէ Հարատարմութեամբ և մտաի խաբէութեամբ , որք ըստ մարդկան աւանդութեան՝ և ըստ տարերց աշխարհիս , և ոչ ըստ Յիսուսի Քրիստոսի" . Կող . բ . 8 .

Վ Ի Ր Ջ

ՑԱՆԿ ԳԼԽՈՎ

Ա. · Յուրաքանչիւր իւրաքանչիւրոյ՝ թէ զի՞նչ
է նա · 1
Բ. · Յուրաքանչիւր ոչինչանալոյ թիւրաքանչիւրոյ · 12
Գ. · Օրհնութիւն հոգւոյ իւրաքանչիւրոյ
ընդ հոգոյս · 17
Դ. · Իւրաքանչիւր քաջանալ յԵրկնս · 29
Ե. · Յուրաքանչիւր շնորհաց սուրբ իւրա-
քանչիւրութիւնսն · 35
Զ. · Յուրաքանչիւր սահմանի շնորհաց · 39
Է. · Յուրաքանչիւր քաջանալոյ շնորհացն · 43
Ը. · Յուրաքանչիւր քաջանալոյ հեթանոսական
շնորհաց · 47
Թ. · Յուրաքանչիւր ոչ գոյոյ ընթերցի ՝ի
շնորհս Աստուծոյ · 54
Ժ. · Յուրաքանչիւր պանծալի հրաշալեաց
իւրաքանչիւրացն վերնոսին · 63

024

ԺԷ. Յաղագս նշանաց խորհրդոց նիւ-
ղէոյսոյ. 87
ԺԸ. Յաղագս պէրէգրինաւանեան խոր-
հրդոցն. 92
ԺԹ. Յաղագս հելլենական խորհրդոց. 97
Ի. Յաղագս պանաղանաւանական խոր-
հրդոց. 111

5h